

19

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳԻՍԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԱԽԱՀԱՅԵՐԸ

Սրտի մեծ հաճութեամբ է որ կը հրատարակենք հետեւեալ յօդուածը Հայ պատմութեան սկզբնական շրջանին վերաբերեալ, և այնքան իր բանասիրական բարձր արժեքին որքան այն կազդուարիչ ու արտասովոր զգացման համար զոր Հայոցքիւնը կրնայ քաղել այս կարգի գիշտութիւն: Որչափ աւելի մեզի ապացուցուի թէ հոգը ուրուն վրայ մեր նախնիք ապրել են, մե՛րն է եղած միշտ որքան հետուն որ կրնայ ելլել մարդկային արդի ծաօնորոշիչներ, այնչափ աւելի կը շեշտուի մեր հաւատարմ գեղին տոկոսներէնք եւ տ՛շահակներէնք մասին: Պատմութեան ուշ շրջաններուն տեղաշարժում եկողներն չէ՛նք եղած մենք այն հողին վրայ որ մերը կը ձանձուցուի: Գիտնականը որ կը ձգնի ու կը հասնի ասիկա ապացուցանելու, այնքան ծառայութիւն կը մատուցանէ միջազգային գիտութեան, որքան իր գեղին, եւ իր կատարած գործը կրկնապէս մեծարելի է մեզի:

Մեր ազգին պատմութեան հիմնական կետերուն հետ առնչութիւն ունեցող բանի մը նոր գիտելիքներ կը փութամ հրատարակ հանել: Ասոնց լուսովը բարձրովին կը փոխուի Հայ ազգին պատմութեան ըմբռնումը, եւ թերեւ ներքին ըլլայ ինծի հակիրճ ձեւով մը ներկայացնել՝ առանց մանրամասն ապացուցներու ընդլայնումի՝ ապահովելու համար առաջնութիւնս:

Մինչև հիմա քննական մէթոտով Հայոց պատմութիւնը ուսումնասիրողները սա տխուր եզրակացութեան հասած էին թէ ճշմարտապէս անկախ Հայ պատմութիւն գոյութիւն չէ ունեցած, թէ Հայ ժողովուրդը միշտ հպատակ և լուծի տակ դասուած է, թէ Հայոց համար բազմի և ժամանակի բոլոր փոփոխութիւնները միայն մէկ փոփոխութիւն նշանակած են՝ սէր փոխել, և երբ վերջի տարիներու մէջ՝ Ասորեստանցոց եւ Վանեան բեւեռա-

գիրներու ընթերցումով երևան եկաւ Դարեհի ժամանակէն առաջ իսկ Հայաստանի մէջ գոյութիւնը մեծ, աշխարհաշէն, ուժեղ պետութեան մը՝ որ կրցած էր Ասորեստանցի աշխարհակալներու ամենի զօրութիւնը կասեցնել, չէզոքացնել, յոգնեցնել և երբեմն նոյն իսկ պաշտպանողական զիրք բռնելու հարձակոյթ, այդ ընթերցումով զբաղող գիտուններէն ոմանք (ինչպէս Լէման և այլք) պնդեցին թէ այդ Արարատեան խալտեան պետութեան փառքը՝ պատմութեան մէջ ճանչցուած սա մեր զիտցած Հայոց չի պատկանիր (.), թէ այն շքեղ անցեալն ունեցող ժողովուրդը շատոնց բաւած, վանուած էր Հայաստանէն՝ առանց հետք մը ձգելու՝ նորեկ Արեւիկանցի մը հոսանքին առջեւ:

Իցի՞ աչքան ՚ի սիրտ վեհից հետ բռնեալ: Վերջիլիսի այս սողը միտքս կուզայ, և չեմ կրնար զարմանքս բռնել երբ կը տեսնեմ թէ գիտուններ, որ անախտակիր հոգիներ պէտք է ըլլան, չեմ գիտեմ ի՞նչ անբացատրելի նախանձառութեամբ մը կապուել կ'ուզեն մենէ այն փառքն ալ որ կը մնայ մերն իսկապէս:

Հետագայ նոր գիտելիքները զոր կը պարզեմ կը յուսամ որ նպաստեն մեր պատմութեան ուղիղ եւ արդար ըմբռնումին:

Ա. Վանեան-խալտեան ժողովրդին գլխաւոր աստուածն էր Խալտի, որուն անունով կը յիշուի այժմ ժողովուրդը Խալտեան, ինչպէս Ասորեստանցիները իրենց Ասոր աստուածով: Այս Խալտի անունը զոր բեւեռագիրները միայն մեզ ճանչցուցին՝ պահպանուած է 30 դարերէ ի վեր Հայ ազգին մէջ, որովհետեւ իմ ականջովս լսեցի հէքեաթ մը որուն հերոսն էր նոյն իսկ Խալտի անունով դեւ մը: Նոր բան մը ըսած չեմ ըլլար յայտնելով թէ ի՞նչպէս տիրող ժողովուրդ մը իր տիրած ժողովրդին աստուածները գեւորութեամբ փոխելու վեհանձն եւ բարի սովորութիւնը ունի:

Փարատելու համար պղտիկ վարանում մը՝ զոր չէի կրնար չունենալ թէ արդեօք հէքեաթին Խալտին բեւեռագիրներուն Խալտին տարբեր կրնար ըլլալ՝ զիմեցի Բրոֆ. Սէյսի հեղինակութեանը՝ որ նամակով մը պատասխանեց. «Դուաւր է չհաւատալ թէ ձեր հէքեաթին Խալտին և վանեան բեւեռագիրներուն Խալտին նոյնն են»: Բրոֆ. Սէյս հաւանութիւն կուտայ նաև նոյնացնելուս

Սելարդ-իս, Լուսնոյ Աստուածը խալտեանց, և Սղերդ քաղաքի անունը, և կ'աւելցնէ. «Մեծ դուռ մը կը բացուի այժմ հայ գիտուններուն առջեւ:» Նուազ գծուար չէ պընդել թէ խալտի մեծ աստուածութեան եւ ուրիշ աստուածներու անունը կրնար Հայոց մէջ պահուիլ՝ առանց խալտեաններու բաւական մեծ զանգուածի մը Արիական Հայոց հետ խառնուրդին:

Բ. Բայց հէքեաթներու մէջ չէ որ պահուած են խալտեան անուններ: Հայ ազգին շիզն ու ոսկըը կազմող հայ նախարարական մեծ տոհմերու մէջն իսկ կը գտնենք զանոնք, և հիմա կրնանք առաջին անգամ ըլլալով աներկբայելի պատասխանը տալ մեր խեղճ մեծ պատմագրին հարցումին որուն ինքը այնքան անճարակօրէն — թէ և հայրենասիրաբար — պատասխանել փորձած է թէ « Ուստի՞ են նախարարութիւնք:» Ապահովաբար պատմաօր գտած անճանաչ Բազը չէր, ոչ ալ Բազէ մը որ Բզնունեաց մեծ նախարարութեան ծնունդ տուած էր, այլ նոյն ինքն Բզուին՝ խալտեան մեծ աշխարհակալ արքան, ուրիշ անուամբ Իսթուին-իս, որուն նորալուր ծպտումին տակ անկարելի է չճանչնալ մեր Բզուինը, ինչպէս լեզուաբանօրէն եղբայր կոչումին տակ կը ճանչնանք Բրատհար անունը որ անցած է բշար, շբար, եղբայր շրջաններէն, նոյն շրջումի և սկզբնական նեցուկ ձայնաւորի սովորական երեւոյթով:

Եւ միթէ ապացոյց մըն ալ չէ՞ Բժնկերտ — Բզնկերտ գիւղին զոյութիւնը ցայսօր Մշոյ նահանգին մէջ, ոչ հեռի Վանայ ծովէն: Անտարակոյս Բ, Չ, Ն բաղաձայններով կազմուած անուն մը կայ ատոր մէջ, եւ անկարելի է Բազ տեսնել այդ անունին մէջ: Բազդատելու է Մժնկերտ, որ իր կոչումը առած Մաժանի անունէն:

Միակ օրինակը չէ այս մեր պատմութեան մէջ թագաւորէ ծագում առած նախարարութեան. չէ՞ որ ունինք նաև հետագայ պատմական ժամանակներուն մէջ Երուանդունեաց նախարարութիւնը Երուանդ բռնակալ-թագաւորէն:

Անլիճելի կերպով կը տեսնուի ուրեմն թէ խալտեանք ո՛չ միայն չեղան անհետ Հայաստանէ, այլ ծագում տուին աւագ նախարարութիւններու ինչպէս Բըզնունեաց, ինչպէս Մանաւազեանց (Մենուաս խալտեան թագաւորէն), նախարարութիւններ այնքան երեւելի որ նոյն իսկ մէկուն անունովը յորջորջուեցաւ Հայաստանի ամէնէն կարեւոր եւ պատմական մեծ լիճը՝ Վանայ լիճը, որուն ափանց շուրջը խտացած են Հայ ազգին է՛ն թանկագին հնութիւնները եւ ուր ապրած է Հայ ազգը իր ամէնէն հարուստ կեանքը:

Գ. Ասորեստանցիք իրենց մեծխօսիկ բեռագիրներուն մէջ երբեմն կը պարծին թէ ծայրէ ի ծայր նուաճած են Նաիրիի երկիրը (Հայաստանի ամէնէն հին անունը), բայց փոքր փուշ մը անոնց «կողը խրած» անհանդիստ կ'ընէ այս մեծագործ աշխարհակալները, այն է Դաւիթանի երկրին իշխանը որ քանի կը յաղթուի, այնքան աւելի կանգուն կը մնայ:

Այս անխոնջ և անընկճելի յաղթուողին երկիրը՝ Դաւիթանի երկիրը՝ Վանեան բեռագիրներուն մէջ կ'երևի Դիաու-իս-նի անունով, և նոյնն է Քսենոփոնի մէջ իբրև նկատ յիշուած Տաօփի Taochi 354 ցեղին երկրին հետ:

Մեր Տայքն է աս, որ թէպէտ մեր պատմագիրներուն մէջ սահմանափակուած է Պարսար լեռանց արեւելեան ստորտը, բայց բեռագիրներուն նայելով երբեմն աւելի հարաւ տարածուած ըլլալ կը թուի, Երասխի աջ ափունքը, Էրզրումէն դէպի արեւելեան հիւսիս, մինչեւ իսկ Մանազկերտի հիւսիսային կողմերը՝ նայելով Գօզանլուի նորագիւտ բեռագրին:

Ասորեստանցոց յիշած Դաւիթանի երկրին, Վանեան բեռագիրներուն Դիաու-իս-նի երկրին, եւ Քսենոփոնի յիշած Տաօփիներուն նոյնութեան վրայ այս տեսութիւնս նաեւ հաղորդած ըլլալով Բրոֆ. Սէյսի, սա պատասխանը առած եմ՝ զոր իր բառերովը կը գնեմ հոս.

“You have made a very nice discovery. That the Diau-khi-ni, and the Taochi of Xenophon are the same becomes self-evident the moment it is stated.”

Ուրեմն նոյն իսկ Քսենոփոնի Աքիմենեանց մեծագոր տիրապետութեան ատեն (որոնց լուծին տակ կատարելապէս հանդարտ մնացին, կ'ըսէ Գարագաշ՝ իր Բըննական Պատմութեան մէջ) Հայաստանի հողին վրայ երկրին անկախութեան ուժն ու իրաւունքը կանգուն պահող ցեղ մը կը մնար:

ԱՐԹՕ

ԼԵՒՈՆԻ ԲԱՆՏԸ

— Այցելութեան արժանի հնութիւններ կան Մանսուրայի մէջ, հարցուցի Յիսուսեան կրօնաւորին՝ որ միակ խօսակիցս էր եղած երկու ժամէ ի վեր, Տամիէթէն թանթա գացող երկաթուղիի վակոնին մէջ:

— Միայն բեկորները կան Սուլթան Սալահատինի ժամանակէն մնացած բանտի մը որուն մէջ Ս. Լուրդովիկոս անցուցած է իր գերութիւնը՝ Ասիկա գրեթէ մէկ հատիկ հնութիւնն է և մեզի համար խիստ յարգի ու պատկանելի, պատասխանեց Յիսուսեանը, քանի որ մեր սուրբ թագաւորներէն մին հոն բնակած է:

Յետոյ պահ մը լռելէ ետքը, յանկարծ աւելցուց.

— Բայց դուք ալ պէտք է այցելէք անպատճառ այդ հին շէնքը, քանի որ Հայ էք: Հոն բանտարկուած է նաև հայ թագաւոր մը, Լեւոն Ռուրիկեան: Չեր վերջին թագաւորը կարծեմ:

Չանձրանալի՛ գրեթէ բռնի՛ կերպով սկսուած խօսակցութիւն մը չէի կարծեր որ այսչափ շահեկան պիտի

զանար: Գիտէի որ Լեւոն Չ գերի տարուած ու եօթը տարի մնացած է Եղիպտոս, բայց Մանսուրայի մէջ բանտարկուած ըլլալուն մասին ծանօթութիւն չունէի: Յայտնութիւնը այնչափ անակնկալ էր ինծի համար որ չիրցայ կասկածի շոշորթ մը չունենալ:

—Մեր պատմիչները, ըսի կրօնաւորին, երբեք չեն յիշած Լեւոն Չի Մանսուրա բանտարկուած ըլլալուն պարագան, թէև կը խօսին Մէլիք էլ Աշրաֆ Սուլթանին Կիլիկիա բրած արշաւանքին ու Լեւոնի գերութեան վրայ:

—Հաւանական է որ յիշած չըլլան, ու շատ ալ բնական, պատասխանեց Յիսուսեանը, գոհ ըլլալով կասկածանքէս որ իրեն առիթ պիտի տար մէջտեղ հանելու իր պատմական հատուկները: —Պատմիչին համար, շարունակեց, կարեւորն է թագաւորին յաղթուիլ ու գերի տարուիլը, իսկ իր բանտարկութեան վայրը նշանակութիւն չունի, մանաւանդ որ չի ալ Դրնար դիտնալ, եթէ ինք, զոր օրինակ, իր պատմութիւնը Կիլիկիոյ վանքերէն մկրտն մէջ գրած է: Պատմական այս տեսակ մանրամասնութիւններ արձանագրութիւններէ ու տեղին վրայ բնութիւններէ միայն կարելի է գտնել ու երբեմն ալ պէտք է յարակից պարագաներէ հետեցնել: Արդ բոլոր ասոնք կը միաբանին ապացուցանելու համար թէ այդ հին բանտը ծառայած է նաև Լեւոն թագաւորին: Յայտնի է որ Սալահէտտինի և իր յաջորդներուն ժամանակ Մանսուրա եղած է Եղիպտոսի Սուլթաններուն մայրաքաղաքը, հետեւաբար հոն բերուած ու պահուած են բոլոր իշխանական գերիները, և այդ բանտը, ինչպէս արաբ պատմագիրները կը վկայեն, մասնաւորապէս շինուած է այդ կարգի գերիներուն համար: Քանի որ Լեւոն թագաւոր եօթը տարի մնացած է Եղիպտոս, զրեթէ ապահովաբար կրնանք ըսել թէ հոն անցուցած է իր գերութիւնը:

Երգեկապըը մօտեցած էր Մանսուրայի և կրօնաւորը պիտի երթար թանթա: Խնդրեցի իրմէն որ բացատրէ ինծի բանտին ճամբան:

—Չեր դէմը ելլող առաջին արարին հարցուցէք, ըսաւ, կամի էլ ֆէպիր մզկիթը, որ քաղքին մեծագոյնն է և զոր ամէն մարդ կը ճանչնայ: Ծիշող այդ մզկիթին քով կը գտնուի բանտին աւերակը:

Քառորդ մը ետքը արաբ տղայ մը կ'առաջնորդէր իս քաղքին ծուռուծու փողոցներէն դէպի մզկիթը:

—Կ'ուզե՞ս որ մզկիթին մէջ պտտցնեմ քեզ, հարցուց առաջնորդս, երբ հասանք շէնքին առջեւ:

—Չէ՛, մզկիթին մօտերը գտնուած հին բանտը պիտի տեսնամ:

—Նոշարակի թագաւորներուն բանտը, զոչեց այն արհամարհոտ շէշտով զոր Արաբները միշտ ունին Նոշարակի բաղը արտասանած միջոցնուն, նոյնիսկ ամէնէն պատկառելի քրիստոնեային դիմաց:

Նոշարակին՝ քրիստոնեան՝ իրենց համար անհաւատն է, պիղծը, դարշիլին, ան որ խոզի միս կ'ուտէ և Ալլահն ու Մուհամմէտը չի ճանչնար:

—Այո՛, քրիստոնեայ թագաւորներուն բանտը, պատասխանեցի գոհութեամբ, արարին այդ անուանակոչութեան մէջ նոր ապացոյց մը տեսնելով Յիսուսեանին ըսածներուն: Ա՛լ ապահով էի որ Լեւոն թագաւորին բանտն էր այցելելիքս:

—Տանիմ քեզի:

* *

Մզկիթին անմիջապէս քովը, զրեթէ կից, աւերակ պատերու մէջ, կամարաւոր զրան մը առջեւ տարաւ դիս:

—Բանտին դուռն է առիկա, ըսաւ:

Թափթփած քարերու կոյտի մը վրայէն զգուշութեամբ քաշելով ներս մտանք:

Բակի մը մէջ դտանք ինքզինքնիս: Աշտոտ, դարձահոտ բակ մը, որուն մէկ անկիւնը, սև ու ճաթրած փայտեր՝ իրարու կոթնած՝ խարխիլի հիւղակ մը կը ձևաւորէին: Արաբ կին մը, հողին վրայ, ճիւղերը տակը, ամանի մը առջեւ կկզած, կերակուր կը պատրաստէր հիւղակին քով:

Չորս կողմս փլած պատեր ու քարակոյտներ կային, ու այդ աւերակներուն մէջ, զրան մուտքին աջ կողմը, միայն երկու խցիկ որոնք դեռ անաղարտ մնացեր էին իրենց զոներով միասին: Խցիկներէն մին, միւսէն աւելի մեծիկ, փոքրիկ լուսամուտ մը ունէր: Իրենց վրայ պատը կ'երկարէր բաւական, ու զրեթէ անորոշ հեռքեր զգացնել կուտային թէ երկբորդ յարկն ալ խուցերու շարք մը կը գտնուէր ատենօք: Ահա ինչ որ մնացած էր Սալահէտտինի իշխանական բանտէն:

Կը մտնամ խուցերուն մէջ, կը նայեմ, կը զննեմ պատերը, յուտալով որ անոնք բաներ պիտի պատմեն: Ինծի անանկ կուզայ որ մեր թագաւորը անպատճառ բնակած է հոտ, այդ մտայլ խորշերուն մէջ... Հայոց թագաւորը: Ու իր ոտքին հետքը կը փնտռեմ գետիկը, ձեռքին զրոշմը՝ պատերուն վրայ:

Անուիւր յուզում մը կը տրորէ զիս, իմ իշխանիս տառապանքներուն յուզումը, իմ իշխանիս որ չեմ ճանչցած, որմէ շնորհք մը չեմ ընդունած և զոր կը սիրեմ ահա:

Այս չարաշուք աւերակներուն մէջ իր ամբողջ կեանքը կը պատկերանայ աչքիս: Իր տասնամեայ գժնդակ իշխանութիւնը, յուսահատական մաքառումները ազատութիւնը պահելու՝ Եղիպտոսի սուլթաններուն յարածուն ու ջախջախիչ զօրութեան դէմ, կործանուած իր մայրաքաղաքին, ու խելայեղ, հապշտապ փախուստը կնոջը՝ Մարիամ թագուհիին՝ ու Փիննա աղջկանը հետ, դեռ ճիգ մըն ալ, հուսկ վերջին դիմադրութիւնն ալ փորձելու համար Տօրոս լեռանց քարերուն ետեւ, ուր դեռ ինք միս կ'երկարածէ վերջնական քայքայումը իր Տէրութեան: Բայց ահա՛ ամէն պաշար կը սպառի, ամէն ճամբայ կը բոցոյթի, ամէն սիրտ կը թուլանայ. սքըլումն ու վհատութիւնը կը տիրէ ամէնուն վրայ, ու գերագոյն սղջակէզի ժամը կը հասնի: Լեւոն անձնատուր կ'ըլլայ իրեն:

ներով ու կը տարուի Երիպտոս: Հո՛ն եօթնամեայ զե-
րութենէ մը ետքը, Սպանիոյ թագաւորին միջնորդու-
թեամբ կ'ազատի ու կ'երթայ Եւրոպա ուր տարիներով
արքունիքէ արքունիք կը քաշքշէ իր դժբախտ ու հալա-
ծական էութիւնը, օգնութիւն և պաշտպանութիւն մուրա-
լով իրեն ու իր երկրին համար: Խոստումներ կը տրուին,
բայց անշորձադրելի կը մնան, իր դանդառնորդ լոնցնելու
համար գրամական պարգեւներ կուտան, կը լուրզեն զինքը
ունայն յոյսերով, մինչեւ որ մահը կը հասնի:

Իր կեանքը մեր ամբողջ պատմութիւնը չէ՞...:

Էւ ահա՛ ամոյն ու խոնաւ պատերու փեռեկներուն
ընդ մէջէն ազօտ տեսիլքը կ'ունենամ կապուած թելերու,
շղթայուած ոտքերու զմէնէ տողանցութեան մը: Ստուեր-
ներն են մեր իշխաններուն, մեր թագաւորներուն, որոնք
կը սահին կ'երթան, պարտուած, զերի, վտարանդի,
զինկիր... Արտաւազգ՝ իր սակի շղթաներով, Արշակ՝ Ան-
յոյշ բերդին մէջ, Պապ՝ կախաղանին վրայ, Վարազդատ՝
լր քարաւայրը, Խոսրով՝ կալանաւոր, Բագարատ՝ շըշ-
թայակապ, Գոգիկ՝ գերութեան մէջ, Լեւոն Գ.՝ բանտին
մէջ... ու կը զգամ որ իրենց բանտէն, գերութենէն,
շղթաներէն ու կախաղանէն մաս մը կը ծանրանայ վրաս,
կը կապկպէ, կ'անզամալուծէ, կը ճնշէ զիս: Սարեուքի-
նէն մինչեւ Համիտ, քսանըվեց դարու նիզակներուն, նե-
տերուն, սլաքներուն, մտրակներուն և խարազաններուն
հարուածը կ'իջնայ զլիսուս, և ա՛լ պակուցեալ, ջախջախ-
ուած կը մնամ, կորովաբեկ ու անյոյս...:

Ու կը զգամ սր բոլոր իմ զաղափարներս, համոզում-
ներս, սկզբունքներս, մտածումներս, իմ խոհեմառարիւնս,
իմ հաւատարմութիւնս, իմ գգոշառարարիւնս, իմ հաւե-
դարտութիւնս, իմ շրջանայեցողութիւնս, այն ամբողջ գե-
ղեցիկ յատկութիւնները որոնցմով օտուած կը պարծիմ
և որոնք իմ ցեղիս յատկանիշներն են, ամենքն ալ սարը-
կութեան, բանտի ու ծեծի զարաւոր ժառանգութեան
մը անողոք անգարմանելի հետեւանքն են:

Ու իշխաններէն ետքը՝ մեր ամբողջ ցաւատանջ, ա-
րինաթաթախ անցեալն է որ կը ներկայանայ աչքիս, ար-
հաւիրքի սոսկումներուն մատնուած ժողովուրդը զոր կո-
տորածը կը հալածէ: Ահա՛ Բուզա որ արինով կ'ողո-
ղէ Հայաստանը, քաղաքներու եւ զիւղերու բնակիչնե-
րը կը ջարդէ, անհամար գերիներ կը բռնէ, որոնց մեծ
մասը ահոելի տանջանքներով կը նահատակուին: Տուրկի
ու Ալի-Արսլան իրենց վայրագ հրոսներուն զլուխն ան-
ցած, շէն քաղաքները կը կործանեն ու բնակիչները կը
ջարդեն: Չամարղան որ Անին հիմնադրատակ կ'ընէ ու
Հայաստանը զիակներով կը ծածկէ: Լէնկիթիմուր կ'անց-
նի ու ահա՛ Սինիք, Արարատ, Տուրուբերտն ու Վաս-
պուրական անապատ կը դառնան: Ու բոլոր Շահաբաս-
ներն ու բոլոր Համիտները, վաղրերն ու բորենիները
որոնք կ'անցնին իրենց արինայեղց կլախներով...:

* * *

Ահ, երբ պիտի երեւան թեմիսի լուս աղջիկները,
անոնք որ անլոյս խորութիւններու մէջ կը նստին, որոնք
երբեք չեն սխալիւր, բան մը չեն մոռնար, արդարու-
թեամբ կը կշռեն ամէն բան ու թափուած արիւնը կը
հաւաքեն սեւ անօթներու մէջ, անոնց ահոելի Վրէժ-
խնդրութիւնը պատրաստելով:

Երբ պիտի փշրէ իր շղթաները գողթան երգիչներու
Արտաւազը զոր քաջերը կապած են Մասիսի մէջ և
որ եթէ չպիտի փրկէ մեզի, գոնէ պիտի կոտորէ բոլոր
աշխարհը...:

Վիկնա

Ե. Օ.

ԱՐԻՒՆԻ ԼՈԳԱՆՔԸ

Արիւնէ գիւնով բաւակը՝ մոլեգիւն աղաղակներով ի-
ջաւ յեաներէն, փորորկայից անպի պես: Երբ յեաները
իրենց կողերէն բօբռեցին վայրագ մարդիկը, մտքը
արդէն կը բարձրանար ծակերէն:

Յաղթական դրօշակը կը ծածակէր օդին մէջ անոնց
աւերածէ գիւնով գլուխներուն վերեւ. ոչ հատուկ ար-
շիւն առջեւ անոնք ահարկոշ փառաբանութիւն մը գո-
սացին դեպի երկիւր:

Դեռ տաք տաք սուրերը շողացին, անհամար կայ-
ծակներուն պես միջոցը մեղքելով, և անոնցմէ ամբողջ
բաւակիւն վրայ արիւնէի կաթիլներ սեճրեցէց: Այդ վր-
դովիչ հեղուակէն խեղալեղ, աչքերէն կարմրած, ամեւ-
քը մէկ աղաղակեցին.

- Այսին... Այսին...

Լէնկիթիմուր լուս, կզակը սեղմուած, նայեցաւ եր-
կարօրէն արիւնաբոշ բաւակիւն, յետոյ շարժումով մը
հրամայեց որ հեռանան, ոչ ինչպէս որ եկած էին՝ ըն-
պէի մը մէջ աներևութացան անհռն շուքի մը պէս յեւ-
ներուն քովերէն, կիրձերուն մէջ:

Երբ ինքը միևսկ մնաց, կաղ ոտքիւն վրայ յեկած՝
հեշտակքի ժպիտով մը աչքերը շուքը դարձուց:

Ամբողջ Հայաստան կը մխար:

Հորիզոնը կը ծակերանար մոխրացած աւերակներու
վրայ, անոնց մէջէն այրած գիւղերուն փրատակները աշ-
տարակներուն վիթխարի կմախքներուն հետ կը ցցուէին
սպասակական և ունայն խոշակերով մը:

Լեւներէն ի վար արիւնէն խեղդուած խոտերուն վրա-
յիւն սոված գայլերու սեւ շոյի մը կը վագի հեղեղի պէս,
խոնաւ գետնէն վրայ անշշուկ:

Այն ատեն Լէնկիթիմուր ինքզինքն էլած վագեց փո-
սի մը եզերքը:

Հոն, ինչպէս որ ինքը հրամայած էր, տղաքներ
մտրած եւ անոնց արիւնով շիճ մը շիւնած էին:

Թարս արիւնքի րարկ հոտը բողոքի մը պէս կը բարձրանար օդին մէջ, ոչ ոք սարսափած բռնակներ կը փախչէին ձգելով, ոչ կէս մոտրիկ մէջ կարմիր կոնակները կը տատակէին կասրառակաբար:

Լեկրիւնը գիւնով առիւծի պէս մակնչելով նետուէցաւ շին մէջ:

Երբ բանձր հեղուկին շօշափոռը զգաց մորթին վրայ, երբ սևոտ սղիքները դեմքը ողողեցին, դժնդակ և անբացատրելի զառանցանք մը ուղեղը կը քակուէր:

Արիւնք հետզհետէ խտանալով գիւնը կը սեղմէր, կը բանտէր տաժանագին գրկուելի մը մէջ: Կոնակները առէլի դանդաղ միտք կը խածնէին: Եւ իրեն բռնեցաւ քի անոնց մէջ կեանքը մարած չէր ոչ անոնք կը մտնային մարմնոյն ընդերքը ծակտիկներէն՝ սիրտը յօշոտելու համար:

Օրոշակ մէջ շատ ամբողջ ժխորք և ողբերը կ'որոտային ակահեղին մէջ, և բոցեղին շեղուներ կարծես ուղեղը կ'այրէին ոչ կը շարժէին:

Այն ատեն վիրաւոր գազակի մը պէս մակնչելով սկսաւ ծեծել արիւնքի շինը իր բռնակներով: Բայց կարիչները կը ցայտէին իր դեմքին վրայ, ձուլած կասարի պէս, ոչ հրեշային հոգիէն արձակուած հայհոյակները իրեն կը դասակային արձագանգուելով շեղուներէն:

Շուրջ կտրած, խեղացնոր, Լեկրիւնը դառնաւ երան կարմիր շինէն:

Մորթին վրայ արիւնք կը նեխուէր ոչ ինքը դիակ կը հասեր:

Կարծրած քիթերը դարձնուց հարկուկին վրայ: Լուսինը կը բարձրանար՝ կարծես իր գարշելի մերկաքիթը ծաղրելով:

Օդը ծանրացած էր ոգեմարներու վերջին շունչերովը, և ողբերը պէս կուշային կարծես միջոցին մէջ:

Հեռաւոր ձայններուն վրայ գայլերը իրենց արիւնտ կզակը բացած կը գոսային:

Այն ատեն ինքն ալ, կաղ ոտքին վրայ ծած, րէտանք բաց, դեպի շուրջը ոտնաց երկար ատեն:

ՉԱՊԵՆԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱՆԻԻ ԱԻԵՐԱԿՆԵՐԸ

...Արագածը մեր ետին է հիմա, շատ հեռուն, ու նորէն կը տեսնենք Արարատը, շատ պզտիկցած, որ այսպէս մեզի գողափար մը կուտայ Երեւանէն առջին մեր կտրած անցած ճամբուն երկայնութեանը մասին:

Հինգ կամ վեց ժամուան դնացքէ մը ետքը, կը նըշմարենք զմեր յնարու եւ մինարէններու ուրուազիծը եւ կը գուշակենք թէ Անին է: Ընդհուպ որ շապու կը գանազանենք բազմաթիւ աշտարակներով ամբացած պատերը: Ա՛լ կասկածի տեղ չի կայ, Անին է: Եւ, իրարի,

իր պատերուն քով կը հասնինք, քանդակաւոր սահմանաքարէ մը կ'անցնինք, ձիերը վազցնելով, իբր թէ ուղեւորներու սպասող քաղքի մը մէջ փառաւոր մուտք մը ընել սեղանք: Երկրորդ պատի մը երկայնքը կը զընենք ինքզինքնիս, բոլորակ ճամբու մը մէջ որմէ դուրս կ'ելլենք մտնելու համար «աւերմունքի պղծութեան» մէջ, ինչպէս կ'ըսէ մարդարէն, քաղքի մը մէջ, որ թագաւորութեան մայրաքաղաք եղած է, որուն շրջապարիսպը հինգ վերստ երկայնութիւն ունի, զրեթէ ամբողջապէս փլած կործանած քաղաք մը, որուն փողոցները կը գծագրուին քարերու կոյտերով որոնք բնականաբար տեղերը ցոյց կուտան: Միայն կանգուն մնացած են ամբողջութեամբ, մէկ քանի եկեղեցի, պատերու կտորուանք որոնք պալատներու կը վերաբերին:

Շատ մը անգամներ աւարի տրուած, Անի վերջին հարուածը ընդունեց 1319ին՝ երկրաշարժէ մը: Այս ահառելի արկածին մանրամասնութիւնները չկան: Ազգային պատմիչները որոնք պատերազմներու մասին ա՛յնքան երկարաբան են, այս վերջնական աղէտը ին մասին լուր կը մնան: Քանի մը նորագոյն հեղինակներ նայնիսկ կործանմանը մասին ուրիշ պատճառներ տուած են, օրինակի համար զետին յորդումը, արտասոց են ջարդութիւն զոր միայն անոնք պիտի ընեն որոնք չեն տեսած զետին խոր յատակները: Ուրիշներու համար ամբողջական կործանումը առաջ եկած է պատերազմներէ: Բայց բեկորներու քննութիւնը շատ տեղերու մէջ կ'ապացուցանէ թէ մարդկային ուժերէն վեր գործութեան մը գործը եղած է: Այսպէս, քաղքին մէջտեղ, աշտարակ մը անաղարտ պտուկած է գետին, իբր թէ կտրուած ըլլար հողին երեսն, և անոր կողերուն վրայ շեղակի տափակցած ոսնդուէր կ'երեւնայ: Պատերազմական որ և է գործիք այդ արդիւնքը առաջ չ'պիտի բերեր:

Ասիկէ զատ, երկրաշարժները կրնանք ըսել ըսել թէ այդ նսահանդներուն երկրաբանական առանձնայատկութիւնը կը կազմեն. հնագոյն աւանդութիւնները եւ սարեգիրքները լեցուն են այդ աղտոյններու յիշատակութեամբը: Բ՛ զարուն, Ստեփանոսի մահուրէն ետքը, որ Սիւնեաց ՉՂրդ եպիսկոպոսն էր, քառասուն օր խաւար տիրեց և լեռնազաշտը սուկալի սասանմունքներ ունեցաւ: Տար հազար բնակիչ կորսուեցան փլատակներուն ներքե: «Գեանին խորէն ձայներ կը լսուէին»:

Մշտութեանը հաւանորէն առաջ կուզար հրաբխային ժայթքման մը մոխիրներէն: Գտնի, խաւի, Երուանդակերտ, Երուանդաշատ քաղաքներն ալ Անին նման լեցուն են երկրաշարժին առաջ եկած աւերակներով: Ո՛վ կը համարձակի ըսել թէ հնագարտ հրաբուխները զորոնք այս վայրկեանիս կը զիտենք, բոլորովին մարած են:

Տիպուա տը Մոնթեռէօ որ 1833ին թուադրուած զբրի մը մէջ սա տողերը կը գրէր. «Այսօրինակ աւերմունքի մը քով, զարմանալի չէ՞ որ Արարատի վրան իսկ, Ակոտի և Ս. Յակոբի եկեղեցիները կատարելապէս պահպանուած ըլլան, թէև շատ աւելի հին են քան կոր-

ճանաձ միւս շէնքերը,» Տիւպուս աը Մոնթեռէօ 1840ին
ամէնէն անողորմ պատասխանը կ'ընդունը այս հիւացիկ
հարցումին. Ակոտի և Ս. Յակոբի վանքը Արարատի մէկ
տաղնապէն միջոցին երկրակուլ կ'ըլլային և երկու հա-
զար հօդի կ'օչնչանային ժայթքման տոչորոզ ցեխին մէջ:

1319թ պատուհասէն ազատողներուն մէկ մասը ա-
պաստանեցան շըջակայ քաղաքները. ուրիշներ պար-
տաւորեցան հեռունները երթալ, փոքր մաս մըն ալ Աստրա-
խանի թաթարներուն ձօտ գաղթեց. ոմանք ալ Խրիմի
մէջ հաստատուեցան ուր իրենց շառաւիղները տակաւին
կը յիշին իրենց նախնական ծագումը. վերջապէս ու-
րիշներ Լեհաստանի մէջ ծագկեալ գաղթականութիւն
մը հիմնեցին: Բազմաթիւ ընտանիքներ ազնուականու-
թեան տիտղոս ընդունեցան. Մեծ Լիթուանիայի մէջ
իշխանական անուններ կան, ինչպէս Գրիգորովիչ, Նու-
րիճան որոնք հայկական ծագում ունին: Թաթարիստան
գաղթողները յետոյ զացին միացան իրենց Լեհաստա-
նի հայրենակիցներուն:

Նախապէս Անի բերդ մըն էր 783ին Բագրատուն-
եաց Աշոտ իշխանին տրուած, որ հոն դրաւ իր գան-
ձերը Հագարացոց կողոպուտէն զերծ պահելու համար:
Իր յաջորդները տեղին հանեցան, իրենց բնակավայրը
ըրին և հիմնեցին քաղաքը զոր պատերով եւ եկեղեցի-
ներով օժտեցին: 993ին Գագիկ Ա կաթողիկէ մը կա-
ռուց ուր հաստատեց կոթողիկոսական աթոռը: ԺԱ
դարուն Գագիկ Բ, Հայոց վերջին թագաւորը, ստիպուե-
ցաւ իր քաղաքը յանձնել Կոնստանդէն Մանուսիոս
կայսեր: Այս թուականին Անի, կ'ըսեն պատմիչները,
100,000 բնակիչ և 1,001 եկեղեցի ունէր: Այս վեր-
ջին թիւը, անշուշտ չափազանցուած, արեւելքոց յա-
տուկ է, շատին զաղափարը տալու համար: Իրաւ է սա-
կայն որ Անիի աւերակները սրբազան շէնքերու բազ-
մութիւն մը ցոյց կուտան: Անոնք են որ ամէնէն ա-
ւելի դիմացած են երկրաշարժական ցնցումներու: Յոյ-
ները երկար ատեն չպահեցին Անին. 1064ին Սելճուք-
եանց Սուլթանը Ալփ-Սուլթան առաւ զայն և կառավա-
րութիւնը յանձնեց Էմիրի մը: Կաթողիկոսական իշխա-
նութիւնը ջնջուեցաւ եւ յետոյ վերահաստատուեցաւ զԼպի
1100 թուականին: 1124ին, Վրաց Դաւիթ թագաւո-
րը Անիի տիրացաւ և այս պատճառաւ պատերազմներ
ունեցաւ Թուրքերուն և Պարսիկներուն: Հետ: Գրեթէ
զարու մը չափ քրիստոնեայ ու մահմետական իշխան-
ները զայն իրարու ձեռքէ խլեցին: Այնուհետեւ, 1239ին
Մոնղոլաց Չամարղան զօրավարը Անին պաշարեց և
հակառակ երկար դիմադրութեանը առաւ ու բնակիչնե-
րուն մէկ մեծ մասը սրէ անցուց:

Անի սրբազան քաղաք մըն է Հայոց համար: Ա-
լիքսանդրոօլի Հայերը ուզեցին զայն վերանորոգել, բայց
ոուս կառավարութիւնը չթոյլատրեց:

Այս աւերակները թախճալից տպաւորութիւն մը կը
թողուն որ մինչեւ անձկութեան կ'երթայ: Անոնք հըռ-
չակ չունին Եւրոպայի մէջ, չեն կրնար ապրեցնել ուղե-

ցոյցները, ցուցակազրուած չեն. անդիւացի զբօսաշըր-
ջիկներ չեն ի գար հոն: Բախտ չունին. շատ հեռու են
մեծ ճամբաներէ, հոչակաւոր, սրբագործուած ուխտա-
գնացութիւններէ: Ո՛չ Շաթոպրիան, ո՛չ Լորտ Պայրըն,
ո՛չ Լամարթին, ո՛չ Լօդի հոնկէ անցած են: Պէտք է
ընդերկար մնալ հոն քերթուած մը կամ վէպ մը հանելու
համար անկէ: Պատկառելի չեն անոնք, որովհետեւ
քայքայումը ամբողջական եղած է. միայն իրենց աըրտ-
մութիւնը մեծ է. պատմութեամբ աւելի կը խօսին քան
արուեստով. երկար բարակ կը պատմեն մարդուս ցական-
քը: Փանի մը խեղճեր ապաստան մը գտած են այդ
աւերներուն մէջ, ու քաղքին քարերով, երեք չորս հիւ-
ղակներ շինած: Հող կը մշակեն քիչ մը ու դրամներ
կը հաւաքեն, որոնք քարերէն ա՛յնչափ շիւուած, մաշ-
ուած են որ արժէք մը չունին: Ատեն ատեն աւելի
թանկազին առարկայ մը կը վարձատրէ իրենց յոգնու-
թիւնը: Այսպէս մեր ընկերներէն մին կըցաւ գնել անըս-
տիւտ շինուածքով պղինձէ կանթեղ մը:

Անի այսօր Էջմիածնի թեմն է: Աւելի ճիշդը խօ-
սելու համար, վանքը հոն կը զրկէ վանական մը, իբր
հսկող ամայութեան, բարոյական պահպանիչ փոշինե-
րուն, որ կը բնակի տեղւոյն միակ հաստատուն շէնքին
մէջ որ սակայն բաւական խեղճուկ է միշտ: Այսուհան-
դերձ խիստ շնորհալից կերպով մեզ ընդունեց: Մեզի
սեղան հրաւիրեցին ամէնէն ընդարձակ սենեակին մէջ:

Այս վանականը որ նուիրապետութեան էն ստու-
րին աստիճանը ունենալ կը թուի, աղտոտ է, զլուխը
ֆէս դրած, իր սեւ փիլոնին վրայէն հաստ շալ մը ա-
ռած, ու մատներովը կը խնջէ:

Մեր խոհարարը գործի սկսաւ ճաշը պատրաստե-
լու համար: Խոշոր ոչխար մը կը մօրթըր որուն կըտ-
րուած զլուխը իր ոտքերուն քով կը հանդչէր: Լաճ
մը խալկինին տակ կրակ կը վառըր այն դուղճերով զոր կը
պատրաստեն արջաճներու թրիքով և զոր գեղերու մէջ
կը չորցնեն հօդէ կոնկրու վրայ որոնք առաջին ակնար-
կով հիւղակներու կը նմանին: Ոչխարը շուտով եփելու
երես չունէր: Ժամանակ ունէինք աւերակներուն այցե-
լութեան սիսելու, ու այդպէս ալ ըրինք Պ. Լէվինսոն-
Լևինսկի և Ալիքսանդրօլէն եկած Հայու մը առաջնոր-
դութեամբ:

Նախ ակնարկ մը կը նետենք գետին, թիրքերէն Ար-
բա-Չայ, հայերէն Ախուրեան, որ այստեղ կ'ընդունի Անի-
Չայի ջրերը: Ջրի այս երկու ընթացքները իրենց հա-
մար խոր կիրճեր, օձապտոյտ ջրանցքներ փորած են՝
պարիսպներ ձեւացնելով: Բարձրաւանդակներուն վրայ
պատեր կը կանգնին: Կամարջի մը հիմքերը կը նշմա-
րենք. մեզի ցոյց կուտան պալատի մը մնացորդները որ
ճանօթ է Քըզ-Քալէ անունով և կառուցուած է անմատ-
չելի ժայռի մը վրայ: Թագաւորի մը աղջկան բնա-
կավայրը եղած է ատ, կ'ըսեն:

Քիչ մը ետքը պիտի իջնենք ջրին եղերքը: Հիմակ,
կ'ուղղուինք զԼպի կաթողիկէն, եւ ինչ որ նախ աչքեր-

նուս կը զարնէ, զանիկա անպատուող մինարէ մըն է: Սիւնուքեանները այսպէս Մուհամմէտը դրած են Յիսուսի բով. զանգակները լուծ են և միւլզգինն է որ կ'երգէ: Մեծ պատուհասին ատեն գմբեթը եւ աշտարակը կանգուն մնացած են, երկուքն ալ լուռ, անբախտութեան ընկերներ: Սանդուխ մը կայ եկեղեցիին մէջը, կարելի է վեր ելլել փրատակներուն մէջէն. մենք չենք յանդգնիր:

Այս եկեղեցին բիւզանդական ոճով է ինչպէս հայկական եկեղեցիներուն մեծ մասը: Քանգակուած խոյակներ իրենց վրայ կը կրեն կամարածեւ դուռը: Բարձր ժայռերը որոնք շինութեան ծառայած են շատ դեղեցիկ են եւ սեի, գորշագոյնի ու կարմիրի զանազան երանգները ունին: Յղկուած վիճակի մէջ շատ ակնախտիկ պէտք է ըլլան: Անիի բազմաթիւ շինութիւններուն մէջ, այս քարերը մոզայիքի ձեւով շարուած են:

Տեսնաք նաև շնորհալի մատուռ մը, կաթողիկէին մօտ, եւ երկու ուրիշ եկեղեցի, որոնք հակառակ անխնամ թողուելուն, այնքան դարերէ ի վեր իրենց տեւականութեամբը ցոյց կուտային եզական զիմացկութիւն մը: Մայր եկեղեցին, ընդարձակագոյն քան կաթողիկէն, աւելի նրբակերտ շէնք մըն է. իր ձեղունին տեղ, որ բարակ սիւններու վրայ յենած էր, հիմակ երկնքի կամարը ունի: Եւ բնութեան ու ճարտարապետութեան այս միակցութիւնը խիստ յուզիչ է: Եկեղեցին անով յստակ լուսաւորութիւն մը կ'առնէ, որուն կը զառնայ միշտ մարդու աչքը, եւ աւերակը յաղթապանձ բան մը կը գտնայ ատու: Կարծես երկնակամարին տեւականութեան բաժանորդ է ինքն այլ: Վրէժ չի գոչեր պատերազմին, պատուհասին, անկացման դէմ: Անիկա կը պատմէ մեծ խաղաղութիւնը զոր ժամանակը կը նետէ ամէն բանի վերայ, ցաւերու կարճութիւնը եւ անդորրութիւնը որ կը տարածուի մտացումին վրայ...: Դուրսը, իրարմէ անշատուած քարերու միջեւ, չոր խոտեր, որոնք ծաղկած են դարնան, տրցակներ կը ձևցնեն: Հարաւային ճակատը երկար արձանագրութիւն մը կը կրէ. սովորութիւն էր այսպէս քարին վրայ փորել կառուցման թուականը, հիմնադիրներուն անունն ու զիտաւորութիւնները: Ահաւասիկ թարգմանութիւնը այդ ստուգարանին՝ զոր ըրած է Պ. Պօռէ: Ամայութեանց հպարտ ուրուականներու ձայնն է որ կը խօսի.

«708ին, այսինքն Քրիստոսի 1010 թուականին, ի կաթողիկոսութեան Հայոց հոգեւոր հայրապետին վեհափառ Սարգսի, Հայոց եւ Վրաց արքայից արքայ Գագիկի իշխանութեան ատեն, ես՝ Կատարինէ թագուհի Հայոց, ապաւինեալ աստուածային զթութեան եւ հաւատարիմ իմ ամուսնոյս, արքայից արքայ Գագիկի հրամանին, շինեցի Մայր եկեղեցին որուն հիմերը դրած էր մեծն Սմբատ: Յետ աւարաման նորածին, կենդանի, հոգեւոր ու մշտատեւ տաճարին, զարդարեցի զայն թանկագին զարդերով, նուիրելով անձս Յիսուսի Քրիստոսի, հանդերձ բնակարանովս և Սմբատ, Աբաս ու Աշոտ զաւակներովս:»

«Ես, Սարգիս կաթողիկոս, հրամայեցի եկեղեցիին պաշտօնէից, որպէսզի բարեպաշտ թագուհւոյն մահուանէն ետքը, Ս. պատարազ մատուցանեն տարին քառասունը մէկ անգամ: Եթէ մէկը մոռնայ այս պատուիր պատասխանատու պիտի ըլլայ առաջի գատաստանին Քրիստոսի: Ի թուին ստեղծագործութեան 643 շ, ի թուին մարդեղութեան 1010: Այս արձանագրութիւնը փորագրեցի ես, Բենէ:»

Կատարինէ թագուհին, պատմիչներուն հաւաստի վերկայութեան համեմատ, եւ ինչպէս ինքն ալ կը պարծի, շքեղօրէն զարդարեց իր եկեղեցին. «Միտանին ու սոկին կը փայլէին հոն. թանկագին ջահերն ու կանթեղները իրենց լոյսերով կը լեցնէին այս կաթողիկոսական տաճարը:»

Հաւագոյն կերպով պահպանուած եկեղեցին Յունացն է կամ Ս. Մատրան Աստուածածնի տաճարը: Չեղունը, զունն ու խորանը մնացած են և պատարազ կը մատուցուի հոն: Անպիտան կերպով նկարուած պատկերներ ցոյց կուտան մեզի, որոնք հին ըլլալու յաւակնութիւնը ունին:

Կայցելենք նաև շատ քայքայուած շէնք մը որուն համար կ'ըսեն թէ բաղնիք եղած է...

Բայց ժամանակ չունէինք ամէն բան մանրամասնօրէն տեսնելու: Չկրցանք մինչեւ թագաւորներու պալատը երթալ: Հոն պիտի գտնէինք հարթքանգակներ, վերջապին հետ կոռուղ երկու ձիաւոր, պարսկական զօրութեան խորհրդանշանը: Կ'երեւայ թէ մարդոց եւ անասունի քանդակները շատ հազուադէպ էին, հաւանօրէն եկեղեցական կանոններու կողմէ արգիւրուած ըլլալուն համար: Դրան մօտ, ամրութիւններուն մէջ, Սիւնուքեանց զինանշանները կան, այսինքն առիւծ մը արձանագրութեամբ շրջապատուած:

Գետին եզերքը, նախ ուղաղրութիւննիս գրուեց սեպ խարակներու մէջ փորուած քարայրներու շատութիւնը: Անշուշտ իբր բնակարան կը ծառայէին. նոյնիսկ մէկ քանին խանութներու կը նմանէին, քարի հատօրներու մէջ դարաններու պէս խորշերով. անոնցմէ շատերը զարդարուած են քարեղէն վանդակորմերով: Այս քարակերտ քաղաքը կրնար ահագին բազմութիւն պարունակել. կ'ենթադրուի թէ Անիի բնակիչները պատերազմի ատեն հոն կ'ապաստանէին. բայց քարայրներու մէջ բնակելու սովորութիւնը այնչափ տարածուած էր, նոյնիսկ Յրանսայի մէջ, որ կարելի է ըսել թէ այդ քանդակագործ քարայրները ամէն ժամանակ ծառայած են: Այդ աւերակներուն մէջ կը գտնուին կարիճներ. մենք բախտ չունեցանք հանդիպելու իրենց, սակայն իժ մը սպաննեցին աղջկանս զրեթէ ոտքին տակ:

Գետին վրայ կ'իշխէր միջնաբերդ մը, որուն պատերը դեռ պատկառելի երեւոյթ մը ունին: Կը կարծուի թէ Արփա-Չայի տակէն անցնող գետնուղի մը զայն հազարակցութեան կը դնէր միւս կզերքին հետ:

Մեր թարթափոււնները ընդմիջուեցան վանականին

տան մէջ ճաշով մը: «Տաճկական գորգի վրան, պատ-
րաստուած էր սեղան:» Բայց այդ գորգը գետինը փռուած
էր և պէտք եղաւ որ Համաժողովին անդամները խնջոյ-
քին շուրջը արեւելեան ձևով բոլորին, և սովորած չը-
լալով, տեսնուեցաւ որ պէտք եղածին չափ ճապուկ չէին:
Ես բազմած էի տանտիրոջ նստարանին վրայ որ փայ-
տի կտոր մըն էր: Մեծ ախորժով կերանք եւ ոչխարը
խիստ հաճուեցաւ:

Արեւը մարը մտած ատեն թողուցինք Անին և շատ
ուշ ատեն հասանք Ալեքսանդրաքոլ:

ՏԻԿԻՆ ՍԴԱՆԻՍԼԱՍ ՄԷՕՆԻԷ

ՕՐՈՒՄԱՆ ԿԵԱՆՔԸ

Լոնտոն, 24 Նոյեմբեր 99

Հայրենի բարբառք: — Յորեկաններու շուրջը: —
Գեղարուեստասերի մը մահը: — Վաղա՛ւեւիկ յեղա-
փոխ մը: — Տարբարող պատրիարքը:

Ըսուած է թէ յառաջդիմութիւնը նահանջումի մէջ
կը կայանայ երբեմն: Նորութիւնն ալ չե՛նք կրնար եր-
բեմն հինէն խնդրել, կը հարցնէի ինքնիրենս, երբ կը
կարդայի ոսանաւորները զոր Պերճ Հայաստանի բերնէն
զրած է: Հին, Ներշնչուներուն այդ զրարար բացատ-
րութիւնները որոնց այլեւս աւանդապահ սրբարանը չէ
պոյսական լեզունիս. հին, այդ թրքական բառերը, հի-
մակ ա՛լ մեզի օտարոտի. հին, քրդիւարին հետ հա-
յերէնի այդ լծակցութիւնը, մեր մտքին անհպելի: Ու
խառնամանեալ բոլոր այդ հնութիւններէն կը բզխի խրժ-
ղուծ նորութիւն մը որ ախորժալուր կը հնչէ թէ՛ հրածին
բայլերգի մը արձագանգը բերէ մեզի, թէ աւաղուկ հե՛-
կտանքներու մարմրած մրմունջը:

Ես թանձրաբարբառ է Հայաստանի այդ լեզուն,
պիտի ըսուի գուցէ: Կարելի է: Բայց Հայրենիքի լե-
զուն Հայրենիքի երաժշտութեանը կը նմանի: Պոլիս ատեն
ատեն կարօտ մը կը մղէր մենկ ոմանք. դէպի տխրամած
խան մը, ուր զարիպները իրենց տալուչը կը զօփէին:
Ի՞նչ ոճէր այդ թմբուկին ողբազին թառանջը որ մեզի
իրեն կը բաշէր: Հայ հողին վրայ հազարաւոր տարի-
ներէ ի վեր ապրուած կեանքի մը նուագերգութիւնն էր,
որ կարծես թէ անջրպետին մէջէն ելելտրական հոսան-
քով մը Պոլսէն Հայաստան սրտերը իրարու հետ հաղոր-
դակցութեան կը զնէր, իբր անթել հեռագիր մը: Նոյն եւ
այդ լեզուն, որ ազգային ոգիին էութեան մասը կը
կազմէ, զի ան ալ հարկու պատմութեան մը ստեղծա-

գործութիւնն է: Վանտոսպեան լճէն Միջերկրական, Սե-
ւանէն Եփրատ, ու էր երբեմն որ Պոլսոյ խանէրն այ,
օրուան կեանքին զգացումներուն եւ զազափարներուն
թարգմանը:

Քառորդ դար մը առաջ երբ Հայաստանի լեզուով
հրատարակութիւնները դեռ նոր երեան կուզային, Պոս-
եանցի Արարատեան նահանգին վէպերը կարդացած ա-
տենս զժուարութեան կը հանդիպէի զանոնք ամբողջա-
պէս հասկնալու համար: Բարեկամ մը որ Հայաստան
ուսումնասիրական ուղեւորութենէ մը վերադարձած էր,
լսելով ինէ քանի մը հարցումներ, ըսաւ թէ այդ միկնոյն
վէպերը Հայաստան շատ դիւրութեամբ կը հասկնային,
ինչպէս ինքը փորձով տեսած էր, վասն զի բոլոր այդ
բառերն ու բացատրութիւնները Հայաստանցիներուն հա-
մար ընտանի են եւ զործածական:

Հայրենի լեզուով հրատարակութիւնները հետզհետէ
շատցան, երբ հայրենիքէն հեռու Հայերը ըզձացին ի-
րենց մայր երկիրը իսկութեանը մէջ ճանչնալ: Գրը-
քեր, հանդէսներ, օրաթերթեր թիւրքիոյ Հայոց ալ բե-
րին, և հեզհետէ կը բերեն, Հայաստանի աւանդութիւն-
ները, հէքեթները, երգերը, բառերը: Այդ հին հայ-
րենագիտութիւնը նոր հիւթով պիտի սնուցանէ մեր նոր
զրականութիւնը: Բայց ինչ որ սպառնացին թիւրքիոյ
Հայերը ամենքն ալ լոկ արձանագրութիւններ են. իսկ
Պոսեանց մեզի տուաւ կենդանի, նկարաւէտ հայրե-
նագիտութեան էջեր: Յեղային վիպասան մը եղաւ եւ
պատկերացուց զգացող, խօսող, գործող օրուան Հա-
յաստանցիները իրենց զգացումներուն, զազափարներուն,
լեզուին, տարազին մէջ:

Պոսեանցի վէպերը եւրոպական ըմբռնումով զեղար-
ուեստական կատարելագործութիւն չունին, բայց Հացի
խնդիրը կամ Կառաձաղիկը զոր շատ տարիներ առաջ
կարդացած եմ, այնպէս ջինջու յստակ տպաւորուած
են յիշողութեանս մէջ իբր զեռ երէկ ցոցած ըլլայի այդ
հատորները: Ընթերցումներուս թարմ տպաւորութեանը
ներքեւ էր որ 1884ի գարնան Պ. Պոսեանցը անձամբ
ճանչնալու բաղկաւորութիւնը ունեցայ Երեւան: Զգուտ,
նիհար, մշտազրգիւ, զուարթախօս, եւ իր զրքերուն պէս
իր ընկերակցութիւնն ալ ախորժահամ: Քանի մը ծա-
նօթներու եւ բարեկամներու հետ Սարտարի այգին կը
ճեմէինք, մեր խօսակցութեան պիւտար նիւթը կաթողի-
կոսական ընտրութեան խնդիրն էր: Պ. Պոսեանց հա-
կառկորդ մըն էր Հայրիկի հայրապետացման: Պատ-
կերալից բացատրութիւններով կը նկարագրէր Էջմիածնի
զրուումը կարմիր շալվարաւոր վանցիներէ երբ Հայրիկ
բազմէր կաթողիկոսական աթոռը: Գուշակութիւն մը զոր
ետքէն իրողութիւնները չհաստատեցին: Այո՛ վանցիները
օր մը լեցուեցան Կովկաս, բայց արիւնի կարմրութեամբը
ներկուած էին:

Մեր խօսակցութեանց միջոցին սրտնեղութիւն մը
կ'ըզայի տեսնելով թէ այդ մտաւորականին կատակա-
սէր բնաւորութիւնը ոմանց ներքի կ'ընէր, անիտիկա-

նկատ վարժունք մը: Պոլսէն եկողի մը ներկայութեանը շատ անպատեհ էր այդ չափազանցեալ ընտանութիւնը: Երեւանցիներէ ոմանց վրայ երբ կը խօսուէր յայտնեցի թէ անոնց անունները թիֆլիս լսած եւ գործերնուն տեղեկացած էի. երիտասարդ մը որ համալսարանականի յաւակնութիւնը ունէր, մատնանիչ ընելով վիպասանը հարցուց. — Այս մարդուն անունն էլ լսեցի՞ք:

— Պարոն Պոռչեանցի անունը Պոլսէն իսկ լսած, սիրած, մեծարած կուզանք կողկաս, պատասխանեցի զայրոյթի շեշտով մը:

— Լսում էք, ըսաւ վիպասանը շուրջը գտնուողներուն: Դողդազոց ձայնով արտասանուած այդ «Լսում էք»ը կասկածել կուտար թէ ժողովրդական հեղինակին սիրտը դառնութիւն մը կը ծածկէր: Այդ գառնութիւնը, եթէ երբեք հետք թողած էր, բողոքովին ջնջուեցաւ այս տարի, և անտարակոյս աւելի խորխոր ձայնով մըն էր որ վիպագիրը «Լսում էք»ը հարցուց իր շուրջը, երբ Արարատեան աշխարհը իր զրական նկարչին յօբելեանը տօնեց, ու Հայսութիւնը հեռուէն ծափեց այդ տօնախմբութեան:

Ի պատիւ մատենագրի մը գրական մեծաշահնդ հանդէսներու միտող մը չեմ: Հեղինակին միտքը եթէ կը հոյսանէ ժողովրդին վրայ, հանրութեան սիրտը եթէ գրագէտին հետ կը բարբախէ, ինչ փոյթ թէ շրթունքները բարբառին կամ լռեն: Բայց յորելեանի նորոյթին ներմուծումը մեր մէջ թերեւս մտքին հանդիսաւոր և յաղթական բողոքն ըլլայնիւթականին լրբենի, յաւակնայեղց անպարծութեանը դէմ, ու նաև, ըսինք, ժողովրդին և հեղինակին միջև վերջնական հաշուեյալարութեան առիթը, կամ թէ աւելի ճիշդ՝ փոխադարձ մեղքերու, «մարդկօրէն սխալանաց» ներումի եւ թողութեան բարեպատեհ առիթը: Երկարատեւ ժամանակամիջոցի մը մէջ, որ քառորդ դարէ մը մինչեւ կէս դար կրնայ երկարածուիլ, միշտ սիրալիր չեն մնար յարաբերութիւնները հասարակութեան եւ զրադէտին, մանաւանդ երբ զուտ գրականութեան նուիրուած հեղինակը երբեմն փորձութիւն կ'ունենայ զգեցելի հրապարակագրութեան առապար սահմանները: Յորելեանին պատմական ծնունդը շատ բարեղէպ է հայ գրականութեան համար իր կոչումին: Հին կտակարանին մէջն է է որ այդ ծագումը կը գտնենք: «Եւ դուն քեզի տարիներու եօթը շաբաթ համբես, այսինքն՝ եօթը անգամ եօթը տարի. ու տարիներուն եօթը շաբաթներուն ժամանակը քառասունութը տարի պիտի ըլլայ քեզի: Եւ եօթներորդ ամսուն տասներորդ օրը ազդարարութեան փողը պիտի հնչեցնես, քառութեան օրը ձեր բոլոր երկրին մէջ պիտի հնչեցնէք փողը... Ասիկա ձեզի Յորելեան տարի ըլլայ:» Յետոյ Հոսովի եկեղեցին ալ հաստատեց իր հաւատացեալներուն համար մեղքերու ընդհանուր թողութեան ժամանակամիջոց մը որ մէկ դարէն մինչեւ քառորդին իջաւ. այդ ալ կաթողիկոսեան յորելեան տօնն է: Հաւատարիմ իր ծագմանը, Յորելեանը, թէ՛ ուրախութեան եւ թէ՛ քառութեան տօն մը մեր գրականութեան

համար: Եւ կը յիշեմ թէ Հացի Խնդիրին հեղինակը զըրած է նաեւ Յեցեր վէպն ալ, անիրաւ հրապարակագրութիւն մը Հայրիկին դէմ երբ ան կը շարձարուէր, կը հաւածուէր թրքական հողին վրայ: Հիմակ Հայոց Հայրապետը մոռցաւ անցեալը — եթէ երբեք կը յիշէր իսկ — ու գորովալիւր խանդակաթ կոնգակով մը ողջագործեց ժողովրդին կենսագիրը: Հայրիկին հետ մենք ալ մնացանք այդ էջերը, սրտերնիս թեթեւացաւ:

* * *

Իօպիլը, Հրեաներուն փողը, ամիս մը առաջ հնչեց Իյմիրէն Պոլիս, արձագանգը հասաւ մեզի, բայց չցնցուեցանք ամենքս: Ո՛ր է մեծ գիրքը, ո՛ր է հոյակապ հատորը որ ժողովրդին սիրտը կը գալարէ, մտքին սլացումներ կուտայ, և ցեղի մը գրականութեանը մէջ թուական մը կ'արձանագրէ: Հանրային կեանքի անցեալի մը ճնշումէն ազատ գտնուող նոր սերունդն իսկ երբ կ'ուսուցնաս իրէ մեր վերջին տասնըհինգ տարուան գրականութիւնը, որ գրեթէ ամբողջապէս օրագրութեան մէջ ծնած, սնած, մեծցած է, իր միտքը չի բերեր թէ Արեւելեան Մամուլը մըն ալ երեսուն տարի է կ'ապրի: Ու ո՛վ այն գրողներէն որ տասնըհինգ տարուան ժամանակամիջոցին հետզհետէ հասան ու սկսան վարել թիրաքիոյ Հայոց գրականութիւնը, երբեք մտաբերեց զի մի Արեւելեան Մամուլին ասպնջականութեանը: Եւ սակայն գերսօգնագրէն գեղեցիկագիտական, իմաստասիրական հրատարակութեան մը շատ նպաստաւոր պայմաններով շրջապատուած էր այդ հանգէսը: Ամառները էր, ուստի առանց հապճեպի, հանգարտութեան մէջ խորհուած, գրուած, խնամքով մշակուած լուրջ յօդուածներ միայն պէտք էր պարունակել. Պոլսոյ տենդոտ միջավայրէն հեռու, պզտիկ քաղքի մը խաղաղութիւնը և պայծառութիւնը կը վայելէր. ու իր խմբագիրն ալ զրական մարդու մը անհրաժեշտ յատկութիւններէն շատը ունէր: Առանց ո՛րեւէ գրաւիչ, սրոշ ուղղութեան, իրարու հետ անկապ կարգ մը ոչինչ յօդուածներու, անիմաստ թարգմանութիւններու խճողում մը կը ներկայացնէր վերջի տասնըհինգ տարուան մէջ այդ հանգէսը որ մեծ մասամբ թունդ պահպանողականութեան պատկանդարանն էր: Պ. Մամուրեան իր հանգէսը պարզապէս ամօական օր սերերը մը ըրաւ: Ու նկատողութեան արժանի էր որ Պոլիս ինչքան աւելի կը սաստկանային մամուլին դէմ խստութիւնները, գրագէտներն ու օրագրողները — ոչ աւենքը անշուշտ — տխրան աւելի կորովալիւր կը մաքաւէին եւ կը բարձրանային: Ընդունուած ճշմարտութիւն մըն է թէ Պոլսոյ օրագրութիւնը երբեք այնքան զօրեղ ու բարձր չէր հանդիսացած որքան երեցաւ էն ծանր, տաքնապալից օրերու մէջ: Իսկ Արեւելեան Մամուլը որ ազատ էր մինչև իսկ կանխարգել գրաքննութեան լուծէն, օրէ օր աւելի ինկաւ:

Երբ մենք Պոլսոյ օրագրական հրապարակը երկնալ սկսանք, Պ. Մամուրեան արդէն տարիքով հասուն էր,

ու մեծ համբաւ կը վայելէր: Կը յուսայինք իբր բարոյ-
յալան մեծ հեղինակութիւն մը յարգել բազմամեայ խմբա-
գիրը. ու գտանք զիւրաքորք, անարգար հրապարա-
կագիր մը:

Պ. Մամուրեան որ սքանչելապէս տիրած է հայ
լեզուին, իր թարգմանած գրքերուն մէջ չէ ուզած եւրոպա-
կան մատենագրութեան գլուխ-գործոցներ միայն նուիրել
հայ գրականութեան, փոխարէն իր կարողութիւնները
վատնելով երկրորդական, երրորդական վ՛պերու թարգ-
մանութեան:

Այդ գրական ազատութեան օրերուն մէջ կարելի չէ՞ր
նոր արթնցնող ժողովրդի մը ձեռքէն բռնել ու եւրոպա-
կան մատենագրութեան մէջէն առաջնորդել զէպի վերա-
ծնութիւն:

Ուրիշ Իզմիրցի մը սակայն իր թարգմանութիւններու
վը ուզեց մեր նոր սերունդին միտքն ու բարքերը վերա-
նորոգելու գործին նպաստել: Յօրեկեանի մը արժանի չէ
արդեօք Պ. Գրիգոր Չիլինկիրեան զոր թէև իբր հեղինակ
չեմ սիրեր, բայց գիտեմ թէ մեծ բան մը քրաւ, զազա-
փարային վիթխարի գործի մը թարգմանութեամբը:

Վիզթոր Հիւկոյի Թշուառներուն հայացումը մեր ազ-
գին մտաւոր յեղաշրջումին պատմութեանը մէջ շատ մեծ
էջ մը կը դրաւ: Նոր երիտասարդութիւն մը որ դպրո-
ցէն չափաւոր ուսում միայն ստացած էր, Թշուառներովը
կրթուեցաւ 1868էն ետքը: Պոլիս վարպետ, աշկերտ,
գրագէտ, սպասաւոր ամենքն ալ Հիւկօ կը կարգային.
շուկան վերէն վար Հիւկօ տարածուած էր. Հայաստանի
ամէն բաղաբը, մինչև իսկ դիւզերու մէջ, Հիւկօ մը կար:
Ամենքը Հիւկօ կը կարգային, ամենուն մտքին առջեւ նոր
տշխարհ մը կը բացուէր: Սամաթիա Ա. Բ. Գ. ի ընկե-
րութիւնը կազմուեցաւ, Թշուառներէն օրինակութեամբ:
Ֆրանսայի ամէնէն ազատական գաղափարները Թշուառ-
ներով մեր մէջ սկսան ընդհանրանալ: Օր մըն ալ այդ
տասը հատորներուն պատկերազարդ նոր տպագրութեանը
ձեռնարկուեցաւ: Բայց ոչ էր. գրաքննութիւնը արդէն
Թիւրքիա հաստատուած էր, ուստի եւ արգելուեցաւ Հիւ-
կոյի վիպասանութեան ամբողջ հրատարակութիւնը:

* * *

Ազգային համակրանքի մեծահանգէս ցոյցը վայելե-
լու իրաւունքը օր մը պիտի ունենար եւ խեղճ Սիմէոն
Գուլամիրեանցն ալ որ երիտասարդական ուժին եւ աշխոյ-
ժին մէջ կ'իյնայ կը մեռնի, գաղափարի մը իրականաց-
մանը զոհ: Ո՛չ ժողովրդական վիպասան մը եղաւ, ոչ հրո-
չակիանուն հրապարակագիր մը, ո՛չ ալ գաղափարային
լրբի մը թարգմանիչը, բայց մեր դրական պատմութիւնը
գեղեցիկ էջ մը պիտի նուիրէ իրեն, վասն զի Գուլամիր-
եանց մեր գրականութեան եզակիան էջ մը աւելցուց.
Գեղեցիկն էջը: Արաքս պատկերազարդ հանդէսին հը-
րատարակութիւնը նորութիւն մը եղաւ, առանց նախըն-
թացի, ու կը վախճամ թէ շարունակութիւն չունենայ,
գոնէ երկար ատեն, զի Գուլամիրեանց զօրեղ կամքով

երիտասարդ, խելայեղ սիրահար Գեղեցիկն, յաղթուեցաւ
տգեղութեան զէմ մղած պատերազմին մէջ: Ուզեց իր
ցեղին ազնուացմանը աշխատել ժողովրդականացնելով գե-
ղեցիկն զգացումը, սէրը: Իր աւերումին մէջ իսկ այն-
քան աղտոր հայրենիքի մը գեղեցիկութիւնն էր որ ուզեց
քանդակել ամէն հայու սրտին խորը: Արաքսը 2,500
օրինակ կը տպագրէր. առատօքէն ամէն տեղ կը սփռէր,
կը տարածէր: Նուէրներուն վրայ կը դիզուէր ապառիկին
հաշիւը: Հանդէսը Թիւրքիա չէր կրնար մտնել, ու Ռուսիոյ
Հայոց բաժանորդներէն շատերը, իբր ճշմարիտ Հայեր,
բաժնեգիրը խղցնելու տգեղ հաճոյքը կ'ուզէին վայելել:
Գրաքննութեան խստութիւնը ու ժողովրդին խստասրտու-
թիւնը յաղթեցին այդ կարողին:

Արաքսի եօթներորդ տարուան երկրորդ թիւը սնիմ
ձեռքս, վերջինը, վերջնականը: Ինչ սիրտ խշխշող հա-
կադրութիւն: Մինչ աչքերս զմայլումով յառած են գրա-
ւիչ նկարներուն, ահա թերթին էջերէն մահուան հոտն է
որ կ'առնեմ: «Բաժանորդագրութեան կանոնաւոր եւ կան-
խիկ չվճարուիլը պատճառ է դառնում այսպիսի մի կարե-
ւոր հրատարակութեան դադարման:» Ու չկրցաւ իր
գործին մահուանը եւ թաղմանը հանդիսատեսն ըլլալու
բաշխութիւնը ունենալ: Հալած, մաշած, սիրտը խոցո-
տած, գնաց հանդիլ իր սիրելի Երեւանին գերեզմա-
նատունը: Իր շիրմին վրայ թո՛ղ քանդակեն «Գեղեց-
կին դոհ»ը:

* * *

Գաղափարի մը համար հալած, մաշած, սիրտը խո-
ցոտած զոհ մը եւ դժբաղդ Ռսկան Նաղարը որուն մահ-
ուան զոյժը Երիպտոսէն յանկարծակիի բերաւ գիտ: Գեռ
բանի մը ամիս առաջ այդ կրակոտ երիտասարդը թո-
ղած էի Գահիրէ, կեանքով զեղուն, յօտալուտ տեսալ-
ցութեան համար Լոնտոն ժամադրութիւն տարով:

Այս տարի փետրուարին էր որ Գահիրէ ծանօթա-
ցայ այդ վանեցի երիտասարդին որուն անունը իսկ ան-
ծանօթ էր ինծի: Քաջ կոուսող մը եղած էր, ու քաջ զորդ
մը ըլլալու կոչուած: Կոիւնքու դաշտին վրայ օր մը
ահոնքի ճշմարտութիւնը հասկցած էր: Վասպուրա-
կան ու իրեն հետ ամբողջ Հայաստան իրենց էն ազնիւ
զաւակներուն ինքնանուէր արիւնով կը զոհուէին սոս-
կալի զաւարտութեան մը: Յայտնութիւնը ահեղ տպաւո-
րութիւն մը թողած էր իր վրան, սրտաբեկ մեկնած էր.
հիմակ իր զրշովը կը կոուէր: «Ո՛հ, կ'ըտէր, դեռ ինծի
պէս ո՛րքան խաբուածներ կան. այդ խեղճերուն աչքերը
կ'ուզեմ բանալ:» Գրածները չէի տեսած. Տաշրուսի ծրար
մը տուաւ, ամէն ինչ հոն էր, շաւարտած սակայն: Վեր-
ջին թերթ մըն ալ կար, կապուած էջի մը փորձը, իր
սրբագրութիւններովը, տակը շարունակելի. Տաշրուսի 20
րդ թիւն էր, որ չէր տպագրուած. կիսատ մնացած գոր-
ծը, կիսատ կեանքերու պատկերը, աւերումէ մը աւե-
լի տխրազգեցիկ:

* * *

Կիսամ մնացած կեանք մը թէ՛ աներու մը ատարաբաղ Սըրգեան Խորէն նախկին պատրիարքը ողբուն մահուան լուրը կը հասնի Պոլսէն: Պատասխան որոշակէս չեմ կրնար տալ: Կործանած, լմնցած կը հաւ մարէինք այդ եկեղեցականը, բայց վաղուան համար ո՞վ կրնայ գուշակութիւն մը ընել: Ազգին թշնամութիւնը այդ եկեղեցականին դէմ կամաց կամաց սկսած էր տեղի տալ կարեկցութեան: Մահը ենթադրութիւններն ալ կիսատ կը թողու: Ինչ որ ստոյգ կ'երեւի ինձի այն է թէ լատինացի համբաւի մը պիտի արժանանար եթէ վանականի կեանքին մէջ մնացած ըլլար:

Աըրզեանի պատրիարք ընտրուելէն երկու տարի առաջ իսկ խումբ մը իր յոյսերը անոր վրայ դրած էր: Ձինքը մօտէն ճանչցողներուն երբ խորհուրդ հարցունեցաւ «Չէ՛, մի՛ ընտրէք այդ մարդը, մեղք կ'ըլլայ իրեն, ըսին: Աստուածասէր, ազգասէր կրօնաւոր մըն է որ քաղաքական կեանքի մէջ շուտով պիտի խաբուի:» Այս կարծիքը յայտնողները Աըրզեանի ջերմ բարեկամներն էին, եւ վստահութեան արժանի: Իրենց ձայնը լսուեցաւ: Արմաշի վանահայրին անունը պատրիարքական ընտրելիներու ցուցակէն դուրս մնաց: Բայց գէպքերը շատ անգամ կը յեղաշրջեն ամէն իմաստութիւն եւ հեռատեսութիւն: Միջակայք մը 1888ին պատրիարքական ընտրութեան պահուն կը հեռացնէր այդ եկեղեցականը իր ընթանալու բնական ճամբէն: Նար-Պէյի ու Բարթողիմէոսի մրցումէն Աըրզեան կը շահէր, կամ աւելի շիտակը կը գոհուր:

Այդ ընտրութիւնը կը յիշեցնէր Ասատուր եպիսկոպոսի մը պատրիարքութեան կոչուելուն պարագաները: Բարի մարդ մըն է եղեր այդ եկեղեցականը որ մտքէն իսկ չանցած ատենը յանկարծ պատրիարք կը հռչակուի: Ինքն ալ ապշած կը մնայ, իրեն հետ ժողովուրդն ալ: «Օրհնեալ ժողովուրդ, կ'ըսէ Իսկիւտարի եկեղեցին քարոզին մէջ, գիտեմ որ զուք ալ ինձի հետ կը զարմանաք թէ ընտո՛ր պատրիարք եղայ: Ամիրաները կոխ ըրին թէ աս ըլլայ պատրիարք, ան ըլլայ պատրիարք, չյարմարեցան, մէյ մըն ալ նայիս աս կոխէն քիչանք Ես խաբուիչ ըրի:» Ամիրաները չկային այլևս, բայց հանրային բարքերը միշտ նոյնն էին. փոխանակ ամիրաներու, կուսակցութիւնները կը կուռէին, Նար-Պէյեան ու Բարթողիմէոսեան անուններով. եւ Ասատուր եպիսկոպոսին տեղն ալ կը բռնէր Աըրզեան Խորէն եպիսկոպոսը, որ քիչանք խաբուիչ կ'ընէր, ինքն իսկ ապշելով: Այլ դարք, նոյն բարք:

Ներսէսէն ետքը պատրիարքի մը շատ գժուար էր ժողովրդական ըլլալ. Յարութիւն պատրիարքէն ետքը զիրին էր ազգին սիրելի ըլլալ, ու Աըրզեանի պաշտօնավարութեան առաջին շրջանը յուսալիր եղաւ: Դժբաղդութիւնը սակայն իր գլխուն վրայ կը հսկէր. Մազսուտ Սիմոն պէյ նորէն իր քովը կանգնեցաւ իբր լիազօր վարչապետ. ու գէպքերը որ իրարու կը յաջորդէին Պոլսու անլուր էին մեր հինգ պարու արձանագրութեանց մէջ: Աստ-

ուածարան վանականի մը մտքէն այլապէս կորովալիր ու փորձ իմացականութիւն մը հագիւ թէ պիտի կարենար գիմադրել պատահարներուն:

Կոյր ճակատագրին էր որ կը վարէր ազգը, կը փորձուինք հարցնել երբ կը յիշենք այդ մահահոտ պաշտօնավարութիւնը որ նախնի վարերու ճակատագրային տրամաբան կը յիշեցնէ իր եղբրական դուռագներով: Գեղացիի մը զաւակ անշուք վանականը թիւրքիոյ Հայոց գերագոյն ներկայացուցիչը կը հանդիսանայ, սարաֆի մը տգէտ զաւակը՝ հայ ազգին քաղաքական բարձրագոյն հեղինակութիւնը, ու Խորէն Նար-Պէյ մը, բարեկամն ու սիրելին Լամարթինի, Հիւկոյի, Հայկական գատին պաշտպանը Երոպայի առջեւ, թագաւորներու, թագուհիներու բանաստեղծը, թիւրքիոյ Հայոց ժողովրդական եկեղեցականը ատ երկու խեղճներուն առջեւ կը կենայ ու աչքերը արցունքով լեցուն, ձայնը մարմած, դողդալով պատառ մը հաց կը խնդրէ «Անթի՛ եմ» ազգակեցիկով, ու Սիմոն պէյ անզթօրէն կը պատասխանէ. — Անթի ես նէ ազգը Հիւանդանոց ունի, հոն գնա՛: Եւ դուրս կը վճռեն ան որուն կը պարտէր Աըրզեան իր պատրիարքական աթոռը:

Ու տոսմը կը շարունակուի: Այն Մայր Եկեղեցիին դուռն իսկ, ուրկէ փառապանծ հանդիսաւորութեամբ Աըրզեան իբր պատրիարք ներս մտած էր, հոն գնտակներու թիրախ կ'ըլլայ, լեղապատառ կը փախչի, ահը դողը հոգիին մէջ. ու ա՛լ չ'ազատիր: Մագսուտ Սիմոն պէյ իր դրամատան սանդուխներուն վրայ, ուսկից փաշա վեր ելլել կ'երազէր, գնտակահար կը տապալի, ու Նար-Պէյ այն քրոջը տանը մէջ ուր անըրթ ազատանարան մը գտնել կը կարծէր, թունաւորուած յանկարծամահ կ'իյնայ:

Օհ, ինչ ողբերգութիւններու նիւթեր կը պատրաստենք ապագայ սերունդներու զրականութեան:

ՀՐԱՋԻԱՆ

ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՔՈՅԾՆԵՐԸ

ԿԵՂՏ ԼՐՏԵՍԸ

— Միտիւ Ժաքը պակաս է այս գիշեր, ըսաւ տանտիրուհին, երբ թղթախաղի սեղանը սարքուելով՝ տանի չափ հիւրերը բոլորեցան շուրջը:

— Աս իրիկուն տեսայ զինքը Շիտակ ճամբան, երկայն ֆէսով մէկու մը հետ կ'երթար կոր, պատասխանեց Մարկոս Լֆէնափ, թուղթերը խառնելով:

— Երկայն ֆէսով, շեշտեց մէկը:

— Այո՛, կարծեմ տաճիկ էր:

— Իրա՛ւ է որ խափիկները երկար ֆէս կը գնեն, հարցուց օրիորդ Չարուհի, ձայնը սովորականէն աւելի ցած հանելով:

— Անանկ կ'ըսեն կոր:

Թուղթերը բաժնուեցան, խաղը սկսաւ և սակայն տարտամ մտատանջութիւն մը կար ամենուն քով: Երկար ֆէսով մարդը միտիւ ժաքին հետ սկսած էր անհանգիստ ընել ղիբինք:

— Դէպի վեր կ'երթային կոր, հարցուց մին, խօսքը Մարկոս Լֆէնտին ուղղելով:

— Չէ՛, դէպի վար: Ուշ մնացածի պէս կը քալէին կոր:

Պատասխանը, փոխանակ հանդարտեցնելու, աւելի յուզեց ունկնդիրները:

— Ո՛ր կ'երթան դէպի վար, հարցուց գրեթէ ինքնիրեն Սարգիս Լֆէնտի, կնճոտ ու անլուծելի հարցի մը դիմաց գտնուողի երկմտութեամբ:

Խաղը կը շարունակուէր, բայց միտքերը խռոված էին:

— Շիտակ ճամբան ո՞ր կողմը տեսար սա մարդը:

— Ռուսիոյ դեսպանատան առջևները:

— Ժամը քանի՞ն:

— Տասներկուրէր կար. կազերը վառելու վրայ էին:

— Դէպի վար կ'երթային կոր:

— Դէպի վար:

Յուսեփիկ աղա հաւաքեց բոլոր ստացուած ծանօթութիւնները, լոյս մը ծագեցնելու համար անոնց մէջէն:

— Ժամը տասներկուրէր, Շիտակ ճամբան, Ռուսիոյ դեսպանատան առջևները, միտիւ ժաք տաճկի նմանող երկար ֆէսով մէկու մը հետ, ուշ մնացողի մը պէս քալելով, դէպի վար կ'երթայ...

Պահ մը ամենքը կարծեցին թէ Յուսեփիկ աղա հետևութիւն մը պիտի հանէ իրողութիւններու այդ կուտակումէն. բայց ո՛չ: Երկու ափը բացաւ, աչքերը դէպի ձեղունը յառեց, դէմքը ծամածոց, լուռ կերպով հասկըցնելու համար թէ խելքը չի հասնիր կոր:

— Չապթիկն չերթան, գոչեց տիկինը, իր ըսածէն ինքն ալ սահմակած:

Նայն միջոցին դուռը զարկին:

— Վս՛ւյ ան է,

— Բարով խերով չի գար:

— Կա՛րճ կապեցէք:

Եկողը փաստաբան կարապետ Լֆէնտին էր:

— Վայ, աքիկն սեղանը դրեր էք, գոչեց գոհ ու զուարթ:

Բարևտուքի արարողութենէն ետքը, տանտիրուհին լուրջ, հանդիսական ձայնով մը հարցուց նորեկին.

— Կարապետ Լֆէնտի, քեզի բան մը պիտի հարցնեմ, շիտակը ըսէ՛. սա միտիւ ժաքին վրայ ի՞նչ կարծիք ունիս:

— Բողբէրէն երեք ոսկի տալիք ունի ինձի, դեռչտուաւ աղէկ կարծիք մը չունիմ վրան:

— Չէ՛, իմ հարցուցածս ան է որ ի՞նչպէս մարդ է:

— Առաւ—փախաւին մէկն է:

— Ատիկա ամենուս գիտցած բանն է, բայց կը կար-

ծես որ խափիկ ըլլայ:

— Կրնայ ըլլալ, շատ աղէկ կրնայ ըլլալ... Ի՛նչ, բա՛ն մը լսեցիք որ...

— Մարկոս Լֆէնտին տեսեր է այս իրիկուն, Շիտակ ճամբան, երկայն ֆէսով մարդու մը հետ կ'երթայ կոր եղեր:

— Ուշ տեսն, թիւնէլին մօտերը, դէպի վար կ'երթան կոր եղեր, աւելցուց Յուսեփիկ աղա տաճկերէն լեզուով:

— Շիտակը ըսեմ, տիկին, պատասխանեց կարապետ Լֆէնտին, ես արդէն ատ մարդէն կը կասկածէի կոր քիչ մը: Ինչո՞ւ, չե՛մ գիտեր. բա՛ն մը լսած եմ, չե՛մ լսած. բա՛ն մը տեսած եմ, չե՛մ տեսած... բայց կը կասկածէի կոր: Չգուշանալու է, Լֆէնտիմ, զգուշանալու է: Հիմակ անանկ տեսն մըն է որ մարդ ինքզինքէն անգամ կը կասկածի կոր:

— Մինչև հիմա բան մը չըսի, խօսք առաւ անդիկն ծերունի մը, բայց քանի որ տեղը եկաւ, ես ալ ըսեմ որ ատ մարդուն վրայ բնաւ վստահ չէի:

— Իրա՛ւ է, վրայ բերաւ Մարկոս Լֆէնտին, գիտես քի բան մը ունի վրան:

— Երբեմն կամուրջին վրայ կը տեսնամ, արագ աւրագ քալելով կ'երթայ, ըսաւ ուրիշ մը:

— Օր մը Պէլիտոզ հանդիպեցայ իրեն:

— Պէլիտոզ... Պէլիտոզ ի՛նչ գործ ունի:

— Անոր մայրը արդէն ժամանակին շատ խօսուած կնիկ մըն էր:

— Հապա հա՛յրը, երկու անգամ քօփ նետած է:

— Աղբարն ալ վերեւէն մեռաւ:

— Շատ երես տալու չէ, վարպետութեամբ մը ոտքը կտրել տանք մեր տունէն, եզրակացուց տանտէրը. հոս ալ դայ նէ՛ նայեցէ՛ք անզգուշութեամբ վտանգաւոր խօսք մը չփախցնէք բերաննույ:

Միտիւ ժաքին խափիկ ըլլալը այսպէս հաստատուեցաւ ու վճռուեցաւ:

* * *

Ամէն անվաս մարդերէն մէկն էր միտիւ ժնք: Երեսուն տարեկան պարապ պտըտող Բերացի երիտասարդ մը, որ ցերեկը անկողինը կ'անցընէր իր ժամանակը ու իրիկունսն զէմ գուրս կ'ելլէր սրճարան երթալու և քանի մը օղի խմելու համար: Գիշերն ալ կա՛մ ֆօնքորտիայի ու Բալէ ֆրիթթալի ֆուռայիները կը սլքտկար, կա՛մ ծանօթ ընտանիքներու տունը բողբէր խաղալու կ'երթար: Ապրուստի որոշ միջոց մը չունենալով՝ ընդհանրապէս փոխառութիւններով կամ թղթախաղէն շահած դրամովը կ'ապրէր: Հայկական խնդիրը ա՛յնչափ կը շահագրգռէր զինքը որչափ Չինաստանի երկաթուղիներուն խնդիրը: Ամէն անգամ որ սրահի մը մէջ օրուան խընդիրներուն վրայ խօսք բացուէր, անդիմադրելի պղտիկ քուն մը կուգար վրան զոր միայն թղթախաղի սեղանին մէջտեղ բերուիլը կրնար վանել:

Ընտանիքներու մէջ սիրով կ'ընդունէին զինքը, նախ

աւ բոքէր խաղացող մը ըլլալուն, երկրորդ՝ միշտ բովը անտիպ բամբասանք մը գանուելուն համար: Ամէն անգամ որ տանտիրուհին. — Միւսիւ ժաք, ի՞նչ նոր լուր, » հարցընէր, միւսիւ ժաք պարաստ ունէր էրիկ—կնկան կոխ: մը, բոքէրի առթիւ ծագած վէճ մը, ես եղած նշանաւոր մը կամ ամուսնացած կնոջ մը արկածները իր սիրահարին հետ:

—Ո՛ր տեղէն ալ կ'իմանաս, կ'ըսէին ունկնդիրնե-րը հիացմամբ, որուն միւսիւ ժաք խորհրդաւոր ձեւով մը կը պատասխանէր:

—Խոռը խապար կը բերէ ինծի:

Արդ, մեր վերը յիշած խօսակցութենէն շարժմ մը ետքը ամբողջ Բերայի մէջ տարածուած էր թէ միւսիւ ժաք լրտես մըն է, թէ ամէն օր Չապլիէն կ'երթայ ու միշտ խափիկներու հետ կը պտըտի: Ինք զեռ բան մը չէր իմացած իր վրայ պտտած զրոյցներէն: Դրանօթները կը շարունակէին ընդունիլ զինքը, բայց առջի մտեր-մութիւնը, առջի անփոյթ խօսակցութիւնը չկար իրեն հետ: Սենեակէ մը ներս մտած միջոցի սկսուած խօսակ-ցութիւնները կը զարկին և տանտիրոջները լուր չէին հարցներ իրեն:

Իր լրտես ըլլալը առանց պիւտրութեան, առանց քննութեան, ընդունուած էր ամէնէն:

—Վա՛յ, ան ալ խափիկ է եղեր, ըսեր ու անցեր էին:

Վերջապէս շուկը հասաւ միւսիւ ժաքի ականջին. — «Ե՛ս, խափիկ...», և խեղճը զարմանքէն ու բարկութե-նէն ինքզինքը կ'ուտէր: Գնաց ծանօթներուն տունը, բո-ղոքեց այդ զրպարտութեան զէմ: Ամենքն ալ գրեթէ միևնոյն խօսքերը ըրին իրեն:

—Միւսիւ ժաք, կարեւորութիւն մի՛ տար, թշնա-միկ մէկը բան մըն է ըսեր է: Մեր ականջն ալ հա-սաւ ատանկ խօսք մը, բայց մենք չննք ճանչնար քեզի: Ու իր մեկնելէն ետքը:

—Անամօթ, երես ունի տէ բողոքելու ելեր է... ա՛լ ասոր վրայ ազէկ մը համոզուեցայ խափիկ ըլլալուն:

Միւսիւ ժաք իր բողոքներուն անգորութիւնը տես-նալով՝ ուրիշ միջոցի զիմեց: Սկսաւ ազգասիրական հո-վեր առնել:

—Անպիտան, ըսին ետեւէն, ազգասէր կը ձեւանայ կոր բերներնու խօսք առնելու համար:

Տաճկական կառավարութեան զէմ խօսեցաւ:

—Անբերսը զիտամբ կ'ըսէ որ նայի թէ իրեն ի-ր սուտնք պիտի տա՞նք:

Որոշեց բնաւ խօսակցութեան չմասնակցել:

—Բիւ մարդը բերանը կը կղպէ կը նստի, ուրիշնե-րուն ըսածը մտիկ կ'ընէ:

Սուլթանը սկսաւ պաշտպանել:

—Աս էր պակաս, սրիկայ...:

Չէ՛, ճար չի կայ, ազատու մ չի կայ, ուզէ չուզէ պէտք է որ լրտես մնայ:

* *

Այն ատեն միւսիւ ժաք լուսաւոր դադափար մը ունեցաւ:

—Քանի որ, մտածեց, անպատճառ իբր լրտես պիտ նկատուիմ, գոնէ ջանամ օգուտ մը քաղել անկէ:

Ա՛լ չբողոքեց իրեն տրուած ստոր պերին համար: Հազաւ լրտեսութիւնը, ծպտուեցաւ անով և սկսաւ շա-հագործել զայն: Պապը Ալիի ցոյցին վրայ քանի մը ա-միս անցեր էր. ձերբակալութիւնը, խուզարկութիւնը և բանտարկութիւնը ամենուն զլխին վրայ կը սաւառնէին սպանալից: Միւսիւ ժաք շարունակեց այցելել ծանօթ ընտանիքներու տունը: Իրա՛ւ է որ առաջուան մտերմու-թիւնը ցոյց չէր տրուեր իրեն, բայց ի փոխարէն աւելի յարգանքով կը վարուէին հետը:

—Աման, զէջ մարդուն հետ զլաւ չ'ըլլուիր, հետը աղէկ երթանք, կ'ըսէին բոլոր անոնք որոնք «զէջ մարդ» շինած էին միւսիւ ժաքը:

Ինքն ալ հիմա փոխուած էր: Հանդիսական, կա-րեւոր մարդու մը հայերը ունէր. ա՛լ բամբասանքի լու-րեր չէր բերեր, այլ աւելի լուրջ բաներու վրայ կը խօսեր:

—Էֆէնտի, այսօր Չապլիէն էի, նորէն քսան հոգի բերին, ամէնուն ալ թեւերը կ'ապուած:

—Յանցանքնին ի՞նչ է եղեր, ժաք Էֆէնտի: Միւսիւ ժաք՝ ժաք Էֆէնտի եղած էր:

—Ի՞նչ պիտի ըլլայ, ետեպիզուտըն, ո՛րը նամակ բաժնի է, ո՛րը բարա ժողովեր է, ո՛րը Հնչակ ցուեր է... փաշան ըսաւ որ եթէ ասանկ երթայ բոլոր տուններն ալ խուզարկել պիտի տայ, մանաւանդ Բերա ու Գոստազիզ: Վտանգաւոր բան մը ունիք նէ՛՝ մէջտեղը մի՛ ձգէք, վեր-ցուցէ՛ք շնչեցէ՛ք, ետքը մեծ փորձանք կը բացուի զը-խերնուզ... չեմ խանուիր:

Եւ ընդհանուր բողոք մը կը բարձրանար:

—ժաք Էֆէնտի, ի՞նչ կ'ըսէք, մեր տունը անանկ բան կը գանուի. մենք տէրութեան հաւատարիմ մարդիկ ենք:

—Գիտեմ, ձաւըն, զիտեմ. ես արդէն պէտք եղածը ըսի փաշային:

—Շնորհակալ ենք, զիտենք որ դուք մեր բարեկամն էք. հարկաւ ձեր շնորհիւ ապահով կ'ընանք ըլլալ:

—Մի՛ վախնաք, ես հոս կ'եցեր եմ. փաշան իս աչքին լոյսին պէս կը սիրէ կ'որ, ամէն բան իմ խորհրդովս կ'ընէ. ինչ ըլլայ նէ՛ «ժաք Էֆէնտի, սէն նէ՛ տէրութի պաշտըմ» կը հարցնէ:

Ու ահա՛ յարգանքն ու պատկառանքը միւսիւ ժաքի նկատմամբ՝ զրեթէ երկիւզածութեան կը հասնէր ամե-նուն քով:

Ընդհանրապէս այդ տեսակ խօսակցութեանց ար-դիւնքը կ'ըլլար հետեւեալ օրը ժաքի կողմէն եկած նա-մակ մը որով քանի մը ոսկի փոխ կ'ուզէր: Դրամը կը վը-ճարուէր անմիջապէս, նոյնիսկ տեսակ մը զոհունակու-թեամբ: Քանի մը ոսկիի փոխարէն այնչափ ազդեցիկ պաշտպանութիւն մը վայելել այդ անստոյգ մասնակին, անշուշտ մեծ բախտ մըն էր:

Կրժմաց կամաց միւսիւ ժաք արուեստի մը կատարե-

լութեանը հասուց իր կեղծ լրտեսութիւնը:

Օր մը՝ յուզուած՝ վազեց Ղալաթիա, Յուսեփիկ աւային գրասենեակը:

— Դուն հոս անհոգ նստեր ես, գոչեց, ու չես գիտեր ինչեր կը դառնայ կոթ զլխուդ վրայ:

— Ի՞նչ, հարցուց խեղճը շմորած:

— Ի՞նչ պիտի ըլլայ, խաֆիէին մէկը քեզ ժռռնալ է բրբր. քովթէն ես եղեր, իրենց բարաները դուն կը պահես եղեր: Ճանրմ Յուսեփիկ աղա, ինչո՞ւ ատանկ գործերու մէջ կը մտնաս, ինչո՞ւ պէտք, զո՞ւն մուսցիր ազգը փրկող, զաւակներու տէր, այդ տարիքիդ մէջ... վաղը զան քեզի բռնեն, տունդ տեղդ խուզարկեն, սենեակդ գոցեն, քեզ զատապարտեն կախեն նէ՛ ի՞նչ պիտի ընես:

Յուսեփիկ աղա, երեսին գոյնը նետած, ահուզողի մէջ.

— Ի՞նչ կ'ըսէք, Ժաք Լֆէնտի, ի՞նչ կ'ըսէք, ե՛ս քովթէն... իրենց բարաները պահե՛մ... ատ ի՞նչ զրպարատութիւն...:

— Ա՛յ կրնաս նէ՛ Հիւսնի պէյին հասկցուր դուն զըրպարտութիւն ըլլալը:

— Է՛յ ի՞նչ ընեմ հիմա... ամա՛ն Ժաք Լֆէնտի խելք մը սորվեցուցէք ինձի... ինտո՞ր իմացաք ժռռնալ ըլլալս...:

— Զապթիէն էի աս անտու երբոր խաֆիէն բերաւ ժուռնալը, առի ձեռքէն սանկ աչք մը նետեցի վրան. անունդ տեսածիս պէս անմիջապէս մարդուն ըսի որ փաշային չի տայ ու բոլը պահէ մինչեւ որ զամ, ու վազեցի քեզի... ուրտեղէն քսան սակի տո՛ւր մարդուն ձեռքը զընենք ազատիս:

Ոսկիները կը համրուին ու միւսի Ժաք կը մեկնի:

Մէկիկ մէկիկ, Մարկոս Լֆէնտի, փաստաբան Կարապետ Լֆէնտի, Սարգիս Լֆէնտի, կը վճարեն իրենց փրկանքը միւսի Ժաքին որ ա՛լ ապրուստը ապահոված՝ աղջիկ կը փնտռէ՝ ամուսնանալու համար:

ԵՐՕՏ

ԹԻԻՐԲԻՈՅ ԿՍՅՈՒԹԻԻՆԸ

Երկաթուղիներու խնդիրը կը շարունակէ Կ. Պոլիս միջազգային կարևորութիւն ունեցող էն մեծ մտազբաղումն ըլլալ: Օտուային թայնզի զարնուած հեռագիր մը ցնցողական լուր մը հաղորդեց: Սուլթանը Ռուսի մը արտօնութիւն է տուեր Սամսոնէն Սըվազ երկաթուղի մը շինելու, Կեսարիոյ ճամբով: Այս մենաշնորհը Ռուսիոյ քաղաքականութեան մէկ մեծ յաղթանակը կը կը համարուի: Չենք գիտեր թէ այս լուրը մինչեւ որ աստիճան ստոյգ է, բայց թայնզի տեղեկութիւնը ո՛չ պաշտօնապէս ո՛չ ալ անպաշտօն կերպով հերքուեցաւ:

Ինչպէս արդէն այս էջերուն մէջ բացատրած ենք, Բեդրպուրկի զահլիճը Ռուսիոյ արեւելեան շահերուն միշտ հակառակ նկատած է եւրոպական ընկերութեանց միջոցաւ կովկասեան սահմանազլխին մօտերը թրքական երկաթուղի շինելու ծրագիրը: Կարելի է որ Ռուսիոյ ապահովութիւն մը տալով դժուարութիւնները հարթելու նպատակաւ որոշուած ըլլայ որ եւրոպական ընկերութիւնները վերջնապէս հեռանան Սիւ ծովի եզերքէն եւ Բարձր Հայքի շրջանակէն, որոնք Ռուսիոյ իրաւասութեանը ներքեւ կը համարուին:

Դիւրաւ կ'ըմբռնուի թէ ո՛րքան ծանր կուզայ սուլթանին և օսմանեան նախարարներուն ու բոլոր թիւրք ժողովրդին, ուղղակի Ռուսիոյ ազդեցութեանը ենթարկել Փոքր-Ասիոյ այդ կարեւոր մասը: Ծանր հարկին ներքեւ ընկճուած է որ թիւրքիս ուսական պահանջումներուն առջեւ տեղի կուտայ: Նոյն իսկ եթէ թայնզի լուրն ալ չստուգուի, յայտնի է թէ Ռուսիա զանակը թիւրքիոյ վրին զրած շատ բան կ'ուզէ: Հայկական խընդիրն է որ իր զանազան երեւոյթներովը կը նպաստաւորէ Ռուսիոյ շահերը: Ահա երկու տարի է որ ուսականաւարութիւնը սուլթանէն կը պահանջէ Կովկաս ապաստանած հայ զաղթականներուն իրենց երկիրը վերադառնալու թողտուութիւն ընել: Պարբերաբար եւրոպական թերթերը կը հրատարակեն թէ Կ. Պոլսոյ ուսական զեսպան Պ. Չինոյիկի սուլթանին երթալով իր կառավարութեան պահանջումին իրականացումը փութացնել կ'ուզէ, բայց սուլթանը մինչեւ հիմակ Ռուսիոյ պնդումներուն ո՛ր է կարեւորութիւն տալ չի թուիր, և Ռուսիա ձայն չի հաներ: Հաւանական է որ Զարին ներկայացուցիչը և սուլթանը սակարկութեան մը կ'ամ յանգեր են կամ յանգելու վրայ են, վասպուրականի արեան զնովը:

Պաղտատի երկաթուղիին շինութեան խնդիրը վերջնապէս կարգադրուեցաւ: Սուլթանը գերմանական Տէօյշ Պանքին տուաւ Անատոլի երկաթուղիին գիծը ֆոն-Եայլէն Պասրա երկարելու արտօնութիւնը, — հսկայական գործ մը որուն զրամազուխը հաւանօրէն մեծ մասամբ Անգլիացիները պիտի հայթայթեն:

Այս առթիւ Կ. Պոլսէն հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն.

«Փրանսայի քաղաքականութեանը համար պարտութիւն մը կը համարուի Պաղտատի երկաթուղիին շինութեան արտօնութիւնը գերման սեղանաւորներու խումբի մը տրուիլը, որովհետեւ Պոլսոյ ֆրանսական զեսպանատունը երկար ատենէ ի վեր կը հետամտէր զայն ստանալու: Թէ՛ քաղաքական եւ թէ՛ առևտրական տեսակէտներով մեծ կարևորութիւն կ'ընծայուի այս կարգադրութեան: Պարսկային ծովուն շուրջը գտնուող բոլոր երկիրները երկաթուղիին միջոցաւ պիտի բացուին գերման ճարտարագործութեան առջև:

«Եւրոպացի սեղանաւորներ եւ ուրիշներ որոնք իրենց զրամը կ'ուզեն թիւրքիոյ մէջ շահաւէտ մեծամեծ

ձեռնարկներու յատկացնել, պէտք է նկատողութեան անեն սուլթանին թէ՛ տնտեսական եւ թէ՛ քաղաքական հայեացքներուն փոփոխութիւնը: Ժամանակէ մը ի վեր է որ սուլթանը շատ կը դժկամակի շնորհել ո՛ր է արտօնութիւն որ կրնայ արտօնատէրները միանգամայն սեփականատէր ընել:

«Երկու օրինակ կը բաւեն հաստատելու համար վերոյիշեալ պիտոլութիւնը: Մէկը՝ Կ. Պոլսոյ քարափնեւրուն համար արուած արտօնութիւնն է. միւսը՝ Պաղատաի երկաթուղիին արտօնութիւնը որուն կը հետամուկին գանազան խումբեր: Սուլթանը չկրնար ետ առնել քարափնեւրու շինութեանը եւ շահագործմանը համար տուած թոյլտուութիւնը, բայց հիմա կը ջանայ պայմանագրութեան մէջ որոշուած ժամանակը լրանալէն առաջ գնել շինուածները, որպէս զի անոնց սեփականատէրը պետութիւնը ըլլայ: Գործողաբար հիմակ պատրաստ ստակ չկայ այս գընումը ընելու համար. բայց սուլթանը կը յուսայ որ այս նպատակաւ կազմուած յանձնաժողովը պիտի կարենայ կարգադրութիւն մը ընել որպէս զի փոխտուութեամբ մը, որուն երաշխաւորութիւն պիտի արուի քարափնեւրուն հասոյթը, պետութիւնը քարափնեւրը իւրացնէ: Երբ անգամ մը սուլթանը ինքն ըլլայ հողին տէրը, այլ ես զիտողութիւն մը չունի քարափնեւրուն օտար ընկերութեան մը ձեռքով շահագործուելուն համար: Պաղատաի գծին շինութեան խնդրին մէջն ալ սուլթանը միենոյն ուղղութեան կը հետեւի:»



Երոպայի մէջ ընդհանրապէս կը կարծուէր թէ Պաղատաի երկաթուղիին խնդիրը գարունէն առաջ չէր կրնար կարգադրուիլ: Սուլթանին աճապարանքը շատ ուշագրաւ իրողութիւն մըն է որ յանկարծակիի բերուաքաղաքական աշխարհը: Կը կարծուի թէ սուլթանը իր թէ՛ ասիական եւ թէ՛ ասիական քաղաքականութեանը համար անհրաժեշտ համարած է շուտով իրեն ապահովել Գերմանիոյ բարեկամութիւնը եւ աջակցութիւնը հաստատ եւ ամուր հիմերու վրայ:

Սուլթանին ասիական քաղաքականութիւնը նոր ուղղութեամբ երեւան կուզայ եւ Անգլիոյ ու Ֆրանսայի մէջ շատ լրջօրէն նկատողութեան կ'առնուի: Խնդրին էութիւնը կարեւոր է գիտնալ, ուստի անգլիական մեծ հանդէսի մը ըրած ամփոփումը նոյնութեամբ կը ներկայացնենք:

Պատճառ մը չկայ տարակոյտի ենթարկելու այն սեղեկութիւնը թէ թիւրքիոյ սուլթանը զինուորական ուժեղ զօրութիւն մը կեդրոնական Սուտան խրկած է: Եթովպիայէ հետևակազօր, մէկ հեծելազունը եւ վեց հրետանի Ֆէզանի հարաւային սահմանագլուխը խրկուել են, եւ թիւրքիոյ յառաջապահ զօրքերը մինչեւ հիմակ իրենց գրաւած զիրքերէն 900 քիլոմէթր անդին անցեր են: Նորագոյն հեռագիր մը կը ծանուցանէ թէ օսմանեան զօրախումբերը

այժմ գրաւած են վատային. այս լուրը ինչ ինչ շըրջանակներու մէջ դեռ վաղահաս կը համարուի: Վաղահաս ըլլայ կամ ոչ, այն իրողութիւնը թէ սուլթանը պատրաստուած է վատայիի վրայ իր գերիշխանութեան յայտարարութիւնը զինուորական զօրութեամբ ալ պաշտպանել, վրդովիչ նորութիւն մըն է արդի ասիական քաղաքականութեան մէջ, եւ կրնայ ամենաժանր հետեւանքներ ունենալ: Ինչ են սուլթանին այս առած քայլին շարժառիթները: Կ. Պոլսէն հասած սեղեկութիւնները հաւանօրէն շիտակ են երբ սուլթանին ձեռնարկը կը վերագրեն 1899 ժարտ Չիի ֆրանքիւսանգլիական պայմանագրութեան որուն 4րդ յօդուածը կ'ընդունի Ֆրանսայի պահանջները թիպէցի, Պորթուգի, Կանէմի եւ վատայիի ամենամեծ մասին վրայ: Թիւրքիոյ սուլթանը ժամանակին բողոքեց ընդդէմ այս համաձայնութեան զոր բռնաբարում մը կը համարի թարապուտի ներսերը մէջ իր ունեցած երեւակայական իրաւունքներուն: Առանց ո՛ր է երկբայանքի ընդունուած էր թէ ինչպէս թունուզի, Եգիպտոսի եւ վերին Նեղոսի հովտին խնդիրներուն նմանապէս եւ այս պարագային մէջ ալ Ապտիւլ Համիտ պիտի շատանար պարզապէս պղատանական ցոյց մը ընելով: Հակառակը կը պատահի:

Տարինքէ ի վեր է որ թիւրքիա լուծեամբ բայց ուժգնութեամբ կը կռուի Հիւսիսային Ափրիկէի մէջ ֆրանսական ազդեցութեան դէմ, մինչ միւս կողմէն Ֆրանսա ալ անպարտու գործունէութիւն ցոյց տուաւ: Թիւրքիա Սնուսիներու միջոցաւ գործեց: Այդ կրօնական եղբայրակցութիւնը ամենամեծ ազդեցութիւն ունի, և հանրածանօթ է թիւրք կայսրութեան համար իր անձնուրութեամբը: Թիւրքիա Սնուսիներուն զօրութեամբ ալ մէն արգելք յարուց Ֆրանսացիներուն դէմ որպէս զի չկարենան Սահրա մանել, ինչպէս նաև Չաթի ամենահարուստ հովիտը: Ֆրանսական զանազան առաքելութիւններուն պատահած աղէտները ամենքն ալ թիւրքիոյ այս քաղաքականութեան հետեւանքն են: Թիւրք գործակալները յաջողեցան իրարու հետ հաշտեցնել այն զանազան ցեղերը որոնք միմիանց անհաշտ թշնամիներ էին: Բայց երբ Ֆրանսա հիւսիսէն, արևմուտքէն և հարաւէն կեդրոնական Սուտան սկսաւ յառաջանալ, այն ատեն ալ ինչ ազգու միջոցներ ձեռք առնելու հարկը զգալի եղաւ: Հետևաբար թիւրք զօրքերը դէպի վատայի խրկուեցան, և Սնուսիներուն շէյխն ալ իր ուխտիսը թողուլ զընաց արևմտեան գաւառները հրահրելու համար իսլամները:

Կեդրոնական Սուտանի մէջ թիւրքիոյ սանձգութիւնները վտանգաւոր են նաև անգլիական շահերուն Նիկէրի շուրջը որուն հիւսիսային մասը մահմետական է:

Համիլաւական շարժումը սուլթանէն գտած սլակցութեամբը վերջին տարիներս հետզհետէ զօրացաւ հիւսիսային և կեդրոնական Ափրիկէի մէջ: Ահնբեր է որ հիմակ Ֆրանսայի և Անգլիոյ շահերը համաձայն են խաւարակուան ցամաքին վրայ:

ԼՈՒՐԵՐ

ՍՈՒԼՓՈՆԻՆ ԴԷՄ. Եր'ն շարքի ի վեր սոչ-
րան Համիտ շա'տ տագնապայից վիճակի մեջ է, մո-
տադուտ վտանգի մը անհն սարսափահար: Հեռոցի'տե
հասած տեղեկոթիւնները կ'ամփոփենք:

Եզրուպային Պոլիս հաղորդուած ըլլալով թէ Երիտա-
սարդ թիւրքերը Իտալիոյ նախկին Քարպոնարական դը-
րոշքիւնովը կը կազմակերպուին, ոչստի եւ անարեկիչ
գործողութիւններ պիտի կատարուին Պոլիս, սոչրանը
սակնուշրայ եղած խաղաղութիւններ կատարել կոչ-
տայ թիւրքերու սուզները, խանութները, արձարան-
ները, ու ինչ զենք որ կը գտնեն կը վերցնեն: Մինչ
այս տագնապը կը տիրէր անս տասը ասուջնակարգ
խալաններ իրենց գլուխ ունենալով Չիպիտուշիւքը, Անգ-
լիոյ դեսպանատունը կ'երբան, եւ քասսուն խալանի ըս-
տորագրութեանը բողոք մը կը յանձնեն: Այս այցե-
լութեան նպատակն է եղեր թիւրքիոյ խալանութեան ին-
մակրանքը Անգլիոյ յայտնել թրանսպարտի խնդրին առ-
թիւ: Բայց տարակոչս չի կար թէ թրանսպարտ պատ-
րուակ մը ըլլալու էր: Պատգամաւորութիւնը ուղղակի
սոչրանին քաղաքականութեան դեմ գանգատելու կ'երբար:
Դեսպանը թիւրքիոյ արտաքին գործոց նախարարին կ'ի-
մացնէ ընդունած այցելութիւնը: Ասոր վրայ կը հրա-
շիրուի Երրորդի պաշտոնը եւ սոչրանին շնորհակալու-
թիւնները կ'ընդունի իր «ոչդիոյ վարմունքի» համար:

Խստութիւնները սաւելի կը սաստիկանան, նորանոր
խոզարկութիւններ ու ձերբակալութիւններ կը կատար-
ուին: Բազմակի Չիս մոլլաւ և պետական խորհրդին
անդամներէ Թերտի պէյ և Սախտ պէյ, կը ձերբակալ-
ուին և Եհեն կ'արքայութիւն: Սախտ պէյ, որ համար-
աւոր հրապարակագիր մըն է, տանջանքներու կ'են-
թարկուի: Անկէ ի վեր ամեն օր նորմենը խոզարկու-
թիւններ կը կատարուին, ձերբակալութիւնները, արքա-
րուանները կը շարունակուին: Կ'ըսուի թէ սոչրանը գահ-
ընկեց ընելու զաւարտութիւն մը եղած է: Չորս քուստ
գտնուէր է թիւրքերու քով. ոչքար օր սոչրանը սե-
լանը գացած ամեն պիտի սպաննեն եղեր զինքը: Վեր-
ջին հեռագիրները կը հաղորդեն թէ Կ. Պոլիս խալանե-
րուն մեջ սաստիկ յոգնուած կը տիրէ, և Սրամպուի կող-
մը մանաւանդ ուսիականական ամենախիստ միջոցներ
ձեռք անուէր են որպէս զի խոտովութիւն մը չպայրի:

ՀԱՄԻՍԼԱՄՈՒԹԵԱՆ մասին «Ռըվիւ տը Բանդ»
իր նոյգմերը 15ի բուռն մեջ շատ շահեկան ոչստու-
նասիրութիւն մը ունի, զոր ընդունու պիտի ներկայացը-
նենք մեր ընթերցողներուն:

Գերման և Անգլիական թեիքերը սոչրանին մուս-
տրական վիճակը վտանգաւոր կը ներկայացնեն: Պե-

տական գանձարանը բոլորովին դատարկ է. տնտեսական
տնտեսականները չեն վճարուիր, յետին աստիճան չքա-
ւորութիւն կը տիրէ թիւրքերուն մեջ, ու իտալական
կը մտնեայ սոչրանը չի գիտեր ոչքի գրամ ձարել ու
հանդարտեցնել ընդհանուր գրգռուէր: Երիտասարդ թիւր-
քերը թեւ անեղ կազմակերպութիւն չունին, բայց Ապտիւլ
Համիտ ար խանգարած երևակայութեանը սարսափա-
հար է: Մեծ-Մարդասպանը այլեւս վտանգութիւն չու-
նի իր անձնապար Անալոնուներուն վրայ: Ասոնք կատ-
ղած են որ սոչրանը չի կրցար պատմել իրենց հայրե-
նակից կանի պէյի սպաննելը: Արդ անալոնուները մի-
անգամայն շատ երես ասած են. սոչրանը կը վախ-
նայ որ Եհենիքիներուն դերը կը կատարեն, որունը
սոչրաններուն տերերն էին, և գանդակեց կ'ընէին զա-
նոնք երբ իրենց համոյ բուռն: Սոչրան Մանուշա
Եհենիքիները չեցեց. Համիտին ալ այդպիսի խոր-
հուշոյ մը կը վերագրուի: Ո'վ սաւելի արքուն պիտի զրա-
նուի, Համիտ թէ Եհենիքիները:

ԱՍՊԱՏԱԿՆԵՐԸ. Կ. Պերսէն անգլիական մամու-
լին կը հեռագրեն թէ 120 հոգի սոչրանական սահմանե-
րին Էրզրումի նահանգը անցնելով կոռուի բնուէր են
թիւրք զինուորներուն հետ: Այս վերջիններէն 14 հո-
գի ոպանուէր են, իսկ սպաստակները զինուորնե-
րին հարստուէրով փախեր սպաստակներ են տրսական
հողը: Յայտնի չէ թէ այս լուրը միևնոյնն է արդեօք
ինչ որ Տրք. Պիլք հաղորդած էր «Յրանքիտրքըր
Յայրուկի»ին: Ըստ գերման ուղեւորին, սոչս զինուոր-
ներու հրագիներով սպասագիներու խոտը հայեր ու-
գած էին Մոռլի հարաւային կողմը երբայ, հոն Հայոց
քաղաքութիւն մը հաստատուէր համար, բայց թիւր-
տերուն հետ կոռուի բնուէրէ, եւ երկու կողմէն 50
հոգի սպաննուէր յետոյ փախեր էին սոչրանական հողը:

ՀԱՍՑԻ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆԻՒ ՎԵՐԱԲԵՐԻՄԱԼ ԿԱԺՆԱԿ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ
ՂՐԿԷՆ ԱՌ

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆԻՒԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին
եւ 15ին: Բաժնեգիրն է Երրուպայի Համար տարեկան 10
եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի Համար տարեկան 2
եւ վեցամսեայ 1 տոլար: